Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 1 (385) 17-31 հունվար, 2016թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Նոր եզրահանգումների եւ նախաձեռնությունների ժամանակը

ԵԽԽՎ-ում հակահայկական բանաձեւերի քննարկումն այլեւս եղելություն է: Եվրոպական խորհուրդն արդեն իսկ հաստատեց, որ պատգամավորների մեծ մասն անտեղյակ էր քննարկվող նյութերի իսկությունից, կամ էլ ուղղակի այն հետաքրքիր չէր նրանցից շատերին: Սակայն, զավեշտալին այն է, որ հենց իրենք՝ հակահայկական բանաձեւերի նախագծերը ամբիոնից հոխորտալով ներկայացնող պատգամավորներն անգամ «բանից անտեղյակ էին»: Երբեւէ չլինելով իրենց իսկ ասած՝ «Ադրբեջանի գրավյալ տարածքում», երբեւէ սեփական աչքով չտեսնելով Սարսանգի ջրամբարն ու «միտումնավոր ջրազրկվող տարածքները», նրանք խաղում էին վարձու խամաճիկների իրենց ծիծաղելի դերերը:

Փաստ է, որ նման որակի պատգամավորների համար այս նստաշրջանը եւ ընդհանրապես ԵԽԽՎ-ն Ադրբեջանի գրպանները թափ տալու լավ միջոց է: Իսկ ԵԽԽՎ-ի նման գործելաոճն առաջին հերթին վնասում է հենց իր՝ միջազգային կառույցի հեղինակությանը:

Արդյունքում՝ մեկ բանաձեւ չընդունվեց, ինչում որոշիչ դեր խաղացին ոչ թե եվրապատգամավորների՝ հարցի վերաբերյալ «սթափ կամ անկողմանակալ» մոտեցումները, այլ հայկական ուժերի՝ միասնական ճակատում հանդես գալու, հատկապես ՀՅ Դաշնակցության Եվրոպայի Հայ Դատի հանձնախմբի լոբբիստական աշխատանքներն ամբողջ Եվրոպայում:

Եթե Մելիցա Մարկովիչի տխրահռչակ զեկույցի ընդունումով ճգնաժամ ապրող Ադրբեջանը մի ուրախանալու առիթ ունեցավ, ապա Ուոլթերի բանաձեւի մերժումը հանկարծակի ապտակ եղավ Ալիեւի դեմքին, ինչը ցույց տվեց, որ այս անգամ իսկապես պետական բյուջեի փողերն իզուր քամուն են տրվել: Ուոլթերի բանաձեւի տապալումը հստակ մեսիջ էր Ադրբեջանին, որ ԵԽԽՎ-ն այն հարթակը չէ, որտեղ պետք է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը քննարկման դրվի, եւ խնդրի լուծման հնարավոր ուղին Մինսկի խմբի ձեւաչափն է:

Ինչ վերաբերում է Մարկովիչի՝ Սարսանգի ջրամբարի վերաբերյալ զեկույցի նախապատմությանը, ապա ԼՂՀ ԱԳ նախարարությունն ի սկզբանե հայտարարել ու իր պատրաստակամությունն էր հայտնել Արցախում ընդունելու Մ. Մարկովիչին, սակայն վերջինս այդպես էլ խուսափել է իրականությանը դեմ դիմաց կանգնելու վտանգից եւ չի եկել Արցախ: Արդյունքում՝ ծագել է խեղաթյուրված մի բանաձեւ, որն ընդունվել է արդեն իսկ հայտնի ճանապարհով: Այսինքն՝ ԵԽԽՎ-ն ընդունել է, այսպես կոչված, «հումանիտար» բնույթի բանաձեւ, թեեւ ոչ մեկի համար գաղտնիք չէ այդ «հումանիտար» բնույթի բանաձեւի ոչ հումանիտար ենթատեքստը: Եթե ԵԽԽՎ-ն այդքան անհանգստացած է «միտումնավոր ջրազրկված տարածքներով», ապա հարկ է հիշեցնել, որ Արցախում, Սարսանգին հարակից մի շարք բնակավայրեր եւս չեն օգտվում ջրամբարի ջրային ռեսուրսներից: Իսկ ինչու՞ չմտածել նաեւ սահմանից այս կողմ, հայկական անջրդի այդ տարածքների ջրային խնդիրների մասին:

ԵԽԽՎ այս նստաշրջանը ոչ միայն եղելություն է, այլեւ յուրօրինակ կամ հերթական դաս հայկական դիվանագիտական կորպուսի համար: Ամենեւին պարտադիր չէ սպասել ադրբեջանական հերթական հիստերիային, հետո հակազդելու միջոցների մասին մտածել: Պետք է նախաձեռնող լինել՝ բնավ, ոչ այն պատճառով, որ հետեւենք Ադրբեջանի օրինակին, այլ պարզապես մեր նախաձեռնողական քաղաքականությունը վաղուց անհրաժեշտություն է:

Ադրբեջանա-ղարաբաղյան սահմանային վերջին շրջանի գերլարվածության եւ միջազգային հարթակներում Ադրբեջանի վարած արտաքին քաղաքականության մեջ հստակ պահվածք է ուրվագծվում՝ բոլոր հնարավոր ճակատներում Ադրբեջանը փորձում է ջլատել հայկական կողմի ուժերն ու ռեսուրսները՝ թե՛ մարդկային, թե՛ քաղաքական, թե՛ ֆինանսական առումներով:

Այս իրավիճակում, կարծում ենք, հայկական կողմը մտորելու եւ նոր մարտավարության որդեգրման անհրաժեշտություն ունի:

ԼՂՀ Ազգային ժողովի խմբակցությունները հանդես են եկել համատեղ հայտարարությամբ

ԼՂՀ Ազգային ժողովի խմբակցությունները ԵԽԽՎ ձմեռային նստաշրջանի օրակարգում ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտությանն առնչվող բանաձեւերի նախագծերի ընդգրկման վերաբերյալ հունվարի 21-ին հանդես են եկել համատեղ հայտարարությամբ.

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) ձմեռային նստաշրջանի օրակարգում Ռոբերտ Ուոլթերի «Բռնության աճը Լեռնային Ղարաբաղում եւ Ադրբեջանի այլ գրավյալ տարածքներում» ու Մելիցա Մարկովիչի՝ «Ադրբեջանի սահմանամերձ շրջանների բնակիչները միտումնավոր զրկված են ջրից» զեկույցների հիման վրա պատրաստված երկու բանաձեւերի նախագծերի ընդգրկումը լուրջ անհանգստություն է առաջացրել Արցախի հանրային շրջանակներում եւ ԱԺ-ում ներկայացված քաղաքական ուժերի մոտ:

Ղարաբաղյան կողմը միշտ էլ պատրաստակամ է եղել միջազգային կառույցների հետ համագործակցության հարցերում, սակայն մենք անընդունելի ենք համարում միակողմանի եւ կանխակալ զեկույցներն ու դրանցում տեղ գտած ձեւակերպումները: Ակնհայտ է, որ նշված զեկույցները եւ նախագծերը՝ ԵԽԽՎ նորմերի եւ սկզբունքների խախտմամբ, կազմվել են միայն մեկ՝ ադրբեջանական կողմի տեսակետների հիման վրա՝ հաշվի չառնելով հայկական կողմերի առաջարկությունները եւ ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման միակ միջազգային միջնորդ կառույցի՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության դիրքորոշումը:

Ադրբեջանա-ղարաբաղյան զորքերի շփման գծում լարվածության աճի ֆոնին Ադրբեջանի ռազմատենչ կեցվածքը սատարող բանաձեւերի ընդունումը Բաքվի իշխանություններին ոչ միայն հնարավորություն կտա շարունակել լարվածության նվազեցման ուղղությամբ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների առաջարկությունների անտեսումը, այլեւ կարող է ընկալվել որպես հակամարտությունը ուժային մեթոդներով լուծելու քարտ-բլանշ:

Ցանկացած կողմնակալ, միջազգային միջնորդների հետ չհամաձայնեցված գործողություն կարող է խախտել այն փխրուն հավասարակշռությունը, որը ներկայիս լարված իրավիճակը բաժանում է լայնամասշտաբ պատերազմից:

Նկատի առնելով վերոնշյալը եւ ընդունելով Եվրոպայի խորհուրդը՝ որպես մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության, իրավական պետության եւ օրենքի գերակայության սկզբունքների տարածման առաջատար կառույց, մենք՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի բոլոր պատգամավորական խմբակցությունների ներկայացուցիչներս, կոչ ենք անում Խորհրդարանական վեհաժողովի մեր հարգարժան գործընկերներին՝ հավատարիմ լինել Եվրոպայի խորհրդի նպատակներին ու առաքելությանը եւ գերծ մնալ տարածաշրջանի կայունությունն ու խաղաղությունը վտանգող փաստաթղթերի ընդունումից:

ԼՂՀ Ազգային ժողովի՝
«Հայրենիք»
«Դաշնակցություն»
«Ժողովրդավարություն»
«Շարժում-88»
«Վերածնունդ» խմբակցություններ

21 հունվարի, 2016թ.
ք. Ստեփանակերտ

Արթուր Աղաբեկյան. Հայ ազատամարտիկն իր ձեռքով գծեց Արցախի սահմանները

Հունվարի 28-ը Հայաստանի Հանրապետության տոնացույցում նշվում է որպես Բանակի օր: Այդ օրն ունի մեծ կարեւորություն հայ ժողովուրդի համար, քանի որ բանակն է մեր պետության ու ազգի գլխավոր պաշտպանը:

Կարդացեք 4-րդ էջում

Քայլար Միքայելյան. Հանուն Արցախի՝ պետք է զորակոչի ենթարկենք Ավստրալիայի հայ համայնքը

Արդեն 18-րդ տարին է՝ Ավստրալիայում գործում է Արցախի ներկայացուցչությունը: Ներկայացուցչության աշխատանքները բազմաբնույթ են՝ տնտեսական ծրագրերից մինչեւ քաղաքական:

Կարդացեք 5-րդ էջում

ԵԽԽՎ-ն եւս մեկ անգամ ցույց տվեց, որ Ղարաբաղի հարցում ունի կողմնակալ վերաբերմունք

ՀՅԴ Արցախի ԿԿ ներկայացուցիչ Լեռնային Ղարաբաղի Ազգային ժողովի «Դաշնակցություն» խմբակցության ղեկավար Դավիթ Իշխանյանն անդրադառնալով՝ ԵԽԽՎ-ում ընդունված, Սարսանգի ջրամբարի մասին հակահայկական զեկույցին եւ Վեհաժողովի կողմից մերժված, Ռոբերտ Ուոլթերի հեղինակած «Բռնությունների աճը Լեռնային Ղարաբաղում եւ օկուպացված այլ տարածքներում» վերնագրով բանաձեւի նախագծին:

Դավիթ Իշխանյանն ասել է, որ ԵԽԽՎ-ի վրա մեծ ազդեցություն է ունեցել Եվրախորհրդի, ԵԱՀԿ Մինսկի խմբի հայտարարությունները, ինչո՞ւ չէ՝ Արցախի ԱԺ խմբակցությունների մակարդակով արված համատեղ հայտարարությունը, որտեղ կոչ էր արվում կողմնակալ մոտեցումներից զերծ մնալու մասին:

Խոսելով «Բռնությունների աճը Լեռնային Ղարաբաղում եւ օկուպացված այլ տարածքներում» վերնագրով բանաձեւի նախագծի մասին, որը մերժվեց ԵԽԽՎ-ի կողմից, պատգամավորը նշել է, որ լիագումար նիստում տարվող քննարկումներից պարզ դարձավ, որ այն չի ընդունվելու: «Այդ զեկույցն ինքնին անտրամաբանական էր, ու շատ զարմանալի կլիներ, որ հաստատվեր ԵԽԽՎ-ի նման կառույցի կողմից»,- նշել է Իշխանյանը:

Իսկ Մելիցա Մարկովիչի հեղինակած ու ընդունված զեկույցը, պատգամավորի համոզմամբ, կողմնակալ էր, կողմնակալ էին նաեւ քվեարկության արդյունքները: «Պարտվելու խնդիր չկար, պարզապես ԵԽԽՎ-ն մեկ անգամ եւս ցույց տվեց, որ ունի կողմնակալ վերաբերմունք Ղարաբաղի հարցում»,- նկատել է նա:

Դավիթ Իշխանյանն ընդգծել է, որ սա առաջին դեպքը չէ, երբ միջազգային ատյանները, մասնավորապես՝ ԵԽԽՎ-ն, կանգնում են կողմերից մեկի կողքին, որովհետեւ հարցը պատշաճ չեն ուսումնասիրում, չեն տիրապետում խնդրի ողջ էությանը, չունեն բավարար հետաքրքրվածություն քննարկվող հարցի նկատմամբ, անտարբեր են:

«Այդ պատգամավորները չեն տիրապետում հարցին, չունեն իրական պատկերացում՝ ինչ է կատարվում Սարսանգի ջրամբարում, դրա համար ունենք քվեարկության նման արդյունքներ: Արմեն Ռուստամյանը ճիշտ ասաց՝ ոնց որ Միլի մեջլիսում լինեն. տպավորություն է, որ ադրբեջանական մեջլիսում է հարցը քննարկվում: Մելիցա Մարկովիչն ունի պրոադրբեջանական վերաբերմունք, ու զեկույցին կողմ քվեարկողներն էլ, /տարբեր առիթներով ասել ենք/, ունեն պրոադրբեջանական կողմնորոշում, ուստի՝ նրանք չէին կարող այլ վերաբերմունք ունենալ»,- ասել է նա:

Հարցին՝ ինչպե՞ս է վերաբերում Մելիցա Մարկովիչի կողմից ԵԽԽՎ ատյանից հնչեցրած պնդումներին, թե Արցախը չի համաձայնել հյուրընկալել նրան, Դավիթ Իշխանյանը պատասխանել է. «Ծոկային էր ինձ համար այս հայտարարությունը... Ինչպե՞ս թե Արցախը չի թույլատրել գալ: Արցախը բաց է ոչ միայն Մելիցա Մարկովիչի առաջ, այլեւ՝ բոլորի. բոլորը կարող են այցելել, ծանոթանալ իրենց հետաքրքրող հարցերին»:

Tert.am

Գասպար Կարապետյան. ԵԽԽՎ պատգամավորների մեծ մասը քվեարկել է առանց ճշմարտությունն իմանալու

Եվրոպայի Խորհրդի խորհրդարանական վեհաժողովի ձմեռային նստաշրջանում երկու հակահայկական բանաձեւերի նախագծերի քննարկման շուրջ «Ապառաժ»-ը զրուցել է Եվրոպայի Հայ Դատի հանձնախմբի ատենապետ Գասպար Կարապետյանի հետ:

«ՀՅԴ Հայ Դատի Եվրոպայի հանձնախումբը մինչեւ վերջին րոպեները պայքարում էր, որպեսզի այդ երկու հակահայկական բանաձեւերը մերժվեն: Համենայնդեպս, բրիտանացի պատգամավոր Ռոբերտ Ուոլթերի ներկայացրած «Բռնությունների աճը Լեռնային Ղարաբաղում եւ Ադրբեջանի այլ գրավյալ տարածքներում» զեկույցը մերժվել է: Այս բանաձեւն ավելի վտանգավոր էր մեզ համար, քանի որ բանաձեւի նախագծում ներկայացված էին հայկական կողմի համար անընդունելի մի շարք կետեր, որտեղ կոչ էր արվում «դուրս բերել հայկական զինուժը Լեռնային Ղարաբաղից եւ Ադրբեջանի մյուս գրավյալ տարածքներից, հաստատել այդ տարածքներում Ադրբեջանի լիակատար ինքնիշխանությունը»: Այդ զեկույցը, փաստորեն, Ադրբեջանում էր կազմվել, եւ ուներ զուտ քաղաքական բովանդակություն,- նշել է Գ.Կարապետյանը եւ հավելել,- Մ.Մարկովիչի ներկայացրած «Ադրբեջանի սահմանամերձ շրջանների բնակչությունը միտումնավոր զրկված է ջրից» զեկույցն ավելի հումանիտար հարց է, սակայն, չնայած դրան, Մ. Մարկովիչը մեկ պարբերությամբ փորձել է քաղաքականի վերածել այն: Այդ զեկույցն ընդունվել է, որովհետեւ այն ավելի եվրոպական հարց է եւ հիմնված է զորքերը դուրս բերելու նախկին բանաձեւի վրա, որը գոյություն ուներ արդեն Եվրոպական վեհաժողովում»:

«Հետեւելով ԵԽԽՎ-ում հակահայկական զեկույցների քննարկմանը՝ համոզվել եմ, որ պատգամավորների մեծ մասը քվեարկել են առանց ճշմարտությունն իմանալու եւ հարցի իրողությունը ճշտելու: Ընդհանուր այդ պատկերն էր տիրում ԵԽԽՎ-ում»,- շեշտել է Գ.Կարապետյանը:

Դեկտեմբերի սկզբին, երբ հայտնի դարձավ, որ ԵԽԽՎ-ում քննարկվելու են այդ զեկույցները, Եվրոպայի Հայ Դատի հանձնախումբը այդ ուղղությամբ լուրջ աշխատանք էր ծավալել, մի շարք երկրներ էր այցելել՝ տեղում հանդիպումներ ունենալով Հայ Դատի հանձնախմբերի անդամների եւ տվյալ երկրների քաղաքական ներկայացուցիչների հետ:

Գ.Կարապետյանը նաեւ նշել է, որ ԵԱՀԿ Մինսկի խումբը, որպես մանդատ ունեցող միակ կազմակերպություն, շարունակելու է զբաղվել բանակցային գործով, եւ ուրիշ ոչ մի կազմակերպություն կամ կառույց չպետք է խանգարեն եւ խոչընդոտեն նրա աշխատանքներին:

«Մինսկի խումբը պետք է շարունակի իր աշխատանքները խնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու համար: Մենք պետք է ապացուցենք, որ Ադրբեջանը, զենքեր կիրառելով եւ խնդիրը պատերազմի վերածելով, իր նպատակին չի կարող հասնել: Ահա սրանում պետք է վստահ լինել»,- շեշտել է Գ.Կարապետյանը:

Լ. ԹԵՎՈՍՅԱՆ

ԵԽԽՎ-ն վերածվում է սուպերմարկետի կամ՝ արեւելյան շուկայի. Դավիթ Բաբայան

«Ապառաժ»-ի թղթակցի հետ զրույցում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի մամուլի քարտուղար Դավիթ Բաբայանը, անդրադառնալով ԵԽԽՎ հակահայկական զեկույցներին, ասել է. «Այդպիսի բանաձեւերը եւ այդպիսի կեցվածքը ժողովրդավարական քայլ չեն: Սա ցույց է տալիս, որ Ադրբեջանի կաշառված ուժերը ԵԽԽՎ-ն վերածում են սուպերմարկետի, կամ ինչպես ասում են՝ արեւելյան շուկայի: Ուղղակի, ի տարբերություն սուպերմարկետի, այնտեղ վաճառում են նեխած ապրանք, այսինքն՝ այն գաղափարներն են մատուցում, որոնք ապակառուցողական են եւ խայտառակ:

ԵԽԽՎ-ն պետք է լինի ժողովրդավարության ջատագով, լինի այն կարեւորագույն ատյաններից մեկը, որը պետք է լրջությամբ գիտակցի, թե ինչպիսի քայլեր են կատարում նրա կաշառված պատգամավորները եւ նման քայլերն ինչպիսի հարված են հասցնում ժողովրդավարությանը՝ միաժամանակ ոտնահարելով ԵԽԽՎ-ի սեփական իսկ գաղափարները, այն ժողովրդավարական արժեքները, որը պետք է այդ ատյանը պահպանի»:

ԼՂՀ նախագահի մամուլի քարտուղարը նաեւ նշել է. «Ադրբեջանն այս քայլով եւս մեկ անգամ ապացուցում է, որ զուրկ է կառուցողական քաղաքականությունից: Հակահայկական այս զեկույցներն ինդիկատոր են Բաքվի ծրագրած քայլերի: Փոխանակ այնպես անելու, որ ստեղծված իրավիճակը եւ բանակցային գործընթացը /որն առանց այն էլ գրեթե փակուղում է գտնվում/ կայունացվի, Ադրբեջանը շարունակում է իր աննորմալ բանաձեւերը կաշառքների միջոցով անցկացնել այս կամ այն ատյաններում՝ հաշվի առնելով մի շարք հանգամանքներ եւ առաջին հերթին՝ այն, որ Ադրբեջանի ֆինանսական վիճակը, կապված նավթային գործոնի հետ, բավականին բարդ է եւ գուցե նրանք չկարողանան մինչեւ վերջ իրենց «ֆինանսական պարտականությունները» կատարել՝ գումար փոխանցելով որոշ պատգամավորների»:

Ըստ Դավիթ Բաբայանի՝ այսօր հայկական կողմն ունի շատ անելիքներ՝ միջազգային ատյաններին իրազեկելու եւ ճշմարտությունն ինչ-որ ձեւով բարձրաձայնելու համար:

Պատասխանելով այն հարցին, թե ի՞նչ պետք է արվի նման զեկույցներին հակադարձելու համար, Դավիթ Բաբայանը նշել է.

«Նման զեկույցներին հակադարձելու համար պետք չէ նրանց նման փողեր ծախսել. թո՛ղ իրենք անեն դա: Այդքան աննպատակային գումարներ ծախսելու հետեւանքով է, որ այսօր այդ երկիրը ճգնաժամ է ապրում: Այդ փաստն այսօր ավելի լավ է երեւում: Թո՛ղ շարունակեն իրենց բյուջեն դատարկել: Եթե նրանք թշնամաբար են իրենց պահում, թող այդպես էլ անեն:

Պետք է տեղեկատվական դաշտում համախմբված աշխատել եւ նման ատյաններում միշտ բավականին համառ կեցվածքով հանդես գալ»:

«ԱՊԱՌԱԺ»

Հայերը ջարդվեցին իրենց իսկ ձեռքով կառուցած քաղաքում

26 տարի առաջ, 1990 թվականի հունվարի 13-20-ը Ադրբեջանի Բաքու քաղաքում ապրող հայությունը ենթարկվեց սպանդի, բռնեց փախուստի ու արտագաղթի ճամփան: Վտարվեց մի քաղաքից, որը կառուցվել էր հենց հայ մարդու ձեռքերով:

ՀՅԴ Արցախի ԿԿ անդամ, ԼՂՀ ԱԺ փոխնախագահ, պատմաբան Վահրամ Բալայանը «Ապառաժ»-ի հետ ունեցած զրույցում, ներկայացնելով Բաքվի՝ 1990 թվականի ջարդերն ու դրանց դրդապատճառները, նշել է, որ խորհրդային Ադրբեջանում ապրող հայերի ջարդերի ծրագիրը սկսվել էր իրագործվել դեռ 1988-ից եւ 1990-ին շարունակվել, ավարտին հասցվել Բաքվում:

«Բաքվի եւ ընդհանրապես նախկին Խորհրդային Ադրբեջանի տարածքում տեղի ունեցած հակահայկական շարժումը, որը հետագայում վերածվեց ջարդերի, սկսվել է դեռ 1988 թվականից: Ջարդերն իրականացվել են ըստ փուլերի, տարբեր հայաշատ վայրերում՝ Սումգայիթ, Գանձակ, Շամախի, Շաքի, Քարհատ, Խանլար, Շամխոր, Միրբաշիր, իսկ արդեն 1990-ի հունվարին՝ Բաքու: Այսինքն՝ մաս առ մաս ջարդվել է հայությունը: Այդ իրադարձություններն ավելի խոր եւ ծրագրված ընթացք են ստացել Գորբաչովի հայտնի հայտարարությունից հետո, երբ նշվեց, որ հայությունը պետք է մտածի նաեւ Բաքվում ապրող 250 հազար հայերի մասին. սա յուրօրինակ ազդանշան հանդիսացավ, որ Բաքվում ավելի սանձարձակ ձեւով իրականացվեն ջարդերը»,- նշել է Վ. Բալայանը:

Այնուհետեւ Վ. Բալայանը նկատել է, որ դեպքերը, անշուշտ, 1915 թվականի Հայոց Մեծ եղեռնի շարունակությունն էին: Այս անգամ այդ ամենը իրականացվեց Ադրբեջանի ղեկավարության եւ ադրբեջանական ժողովրդի կողմից:

«Դա, միանշանակ, թուրքական քաղաքականության շարունակությունն էր: Եթե Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին, մեծ տերությունների դաժան հակամարտության պայմաններում, հայությունը պարզապես ձգտում էր պահպանել իր ֆիզիկական գոյությունը եւ թուրքերը դրան պատասխանեցին եղեռնով, ապա նմանօրինակ ջարդեր կատարվեցին նաեւ Ադրբեջանի կողմից: Այս անգամ՝ արցախահայության ազատության եւ անկախության համար շարժումը ճնշելու նպատակ ուներ դա,- նշել է Վ. Բալայանը: - Երկրորդ, օգտվելով առիթից՝ Ադրբեջանի ղեկավարությունը ձգտում էր էթնիկ միատարր պետություն ստեղծելու իր ծրագիրն իրագործել, որը սկսվել էր դեռեւս խորհրդային շրջանում: Օգտվելով խառնակ իրավիճակից՝ Ադրբեջանի օրվա իշխանությունները ձգտում էին հայությանը վերջնականապես դուրս մղել պատմական հայրենիքից եւ լուծել իրենց կոկորդին ոսկոր դարձած Արցախի հարցը: Գաղտնիք չէ, որ 1918 թ. ադրբեջանական պետությունը ձեւավորվել էր հայկական տարածքների վրա: Ադրբեջանի ղեկավարությունը խորհրդային ժամանակահատվածում հայերից ազատվելու իր ծրագիրն իրագործում էր ինչ-որ մի տեղ «խաղաղ» ձեւով, այսինքն՝ ստեղծում էր անտանելի պայմաններ, որ հայերով բնակեցված տարածքները հայաթափվեն: Այդ ճակատագրին արժանացան Շամխորի, Խանլարի, Քարհատի, Ղազախի, Թովուզի, Գանձակի, Թարթառի, Կասում Իսմայիլի հայությունը, որոնք ստիպված բռնեցին արտագաղթի ճամփան: Արդյունքում՝ այդ շրջանների էթնիկական պատկերը 1980-ականներին արդեն լրիվ փոխվել էր: Հետո նրանք հայերի մնացած հատվածների նկատմամբ հեշտությամբ հաշվեհարդար տեսան...

Բաքվի հայերը ջարդվեցին հայ մարդու ձեռքերով կերտված քաղաքում»:

Ցայսօր Բաքվի ջարդերն ըստ արժանվույն չեն դատապարտվել: Այն հարցին, թե արդյո՞ք մենք բավարար աշխատանքներ ենք տանում այդ ուղղությամբ, Վ. Բալայանը պատասխանել է. «Ցավոք, աշխարհը միշտ էլ կառավարվել է գերիզոր պետությունների կողմից: Եթե սպասենք, որ աշխարհի գերտերություններն են մեր խնդիրները լուծելու, թյուրիմացություն կլինի: Դրա մասին է խոսում նաեւ մեր բազմադարյա պատմությունը: Մեր քաղաքական գործիչներն ու հասարակությունը պետք է հասկանան, որ հարցը պետք է լուծվի մեր իսկ ջանքերի շնորհիվ: Խոշոր տերությունները, այսպես ասած, ինչպես միշտ՝ ուշացած արձանագրում են կատարված փաստերը՝ բավարարվելով հերթական ցավակցական խոսքերով: Նույնը կատարվեց Սումգայիթի եւ Բաքվի դեպքում. խորհրդային մամուլում խեղաթյուրված արձագանքներ եղան, ջարդերը վերագրվեցին մի քանի ծայրահեղականների՝ ժխտելով, որ դա ամենաբարձր մակարդակով էր կազմակերպված՝ եւ ադրբեջանցիների անմիջական մասնակցությամբ»,- ասել է Վահրամ Բալայանը եւ նշել, որ իրականությունն աշխարհին հասցնելու եւ արդարության վերականգնման ուղղությամբ պայքարելու հարցում մեր կողմից տարվող աշխատանքներն ինչ-որ տեղ թերի են. «Մեր ամեն մի քայլը պետք է կախված լինի ոչ թե Ադրբեջանի, այս կամ այն երկրի գործելաոճից եւ ձեռնարկումներից, այլ՝ մենք պետք է ունենանք համապատասխան ծրագիր եւ առաջնորդվենք դրանով: Անհրաժեշտ է ամենօրյա աշխատանք կատարել՝ աշխարհին իրականությունը ցույց տալու համար. պետք է ակտիվ լինենք տեղեկատվական պատերազմում: Լոբբիստական աշխատանքների եւ մեր բարեկամ երկրների ու գործիչների աջակցությամբ, ինչպես նաեւ մեկտեղելով ԼՂՀ, ՀՀ, Սփյուռքի ուժերը, հասնենք արդյունքի:

Պետք է ցույց տալ Մինսկի խմբի եռանախագահող երկրներին ու շահագրգիռ բոլոր ուժերին, որ Ադրբեջանը մի պետություն է, որը միայն ուժային ճանապարհով է փորձում լուծել իր խնդիրները. դա է վկայում նաեւ այսօր ղարաբաղա-ադրբեջանական սահմանային լարված իրավիճակը: Հակառակորդին դիմակայելու եւ ցանկացած պարագայում ճիշտ հակահարված հասցնելու համար կարեւոր է մեր ներքին միասնությունը: Այդ հարցում բոլորս պետք է միակարծիք լինենք, անկախ մեր հայացքներից. սա համազգային շարժում պետք է դառնա»,- նշել է քաղաքական գործիչը:

Նրա խոսքով՝ Եվրադատարանում եւ մյուս համապատասխան մարմիններում ու կառույցներում, մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության համատեքստում, պետք է ներկայացնել իսկությունը՝ Ադրբեջանի իրական դեմքը: Բայց միայն ներկայացնելը բավարար չէ. ամենօրյա համախմբված, հետեւողական աշխատանք է անհրաժեշտ: Բոլոր ուղղություններով պետական եւ հասարակական կառույցները պետք է գործեն: «Աշխարհն ապրում է անհանգիստ ժամանակներ, եւ մենք, ցավոք, չենք կարող դուրս մնալ այդ զարգացումներից. այսպես թե այնպես, շոշափուկները հասնում են Արցախ: Մեզ մնում է պարզապես, առաջին հերթին, մեր երկրի ներքին կյանքն ավելի կարգավորել, ստեղծել ժողովրդավարական ամուր հասարակություն: Խելամիտ, հավասարակշռված ներքին եւ արտաքին քաղաքականության միջոցով ամեն օր անհրաժեշտ է բարձրացնել երկրի դիմադրողական ուժը»:

«Նախկին Խորհրդային Ադրբեջանի տարածքում տեղի ունեցած ջարդերի համար ոչ միայն Ադրբեջանը, այլ հենց խորհրդային իշխանությունն է ամենամեծ պատասխանատուն,- հավաստում է Վ. Բալայանը եւ ավելացնում,- մեր պատմագիտությունը եւ քաղաքագիտությունն առ այսօր շարունակում է այն տեսակետը տարածել, թե իբր Ստալինի անմիջական նախաձեռնությամբ Լեռնային Ղարաբաղը բռնակցվեց Ադրբեջանին, բայց ես կարծում եմ, որ դա այնքան էլ ճիշտ չէ, որովհետեւ Ստալինը ընդամենը խորհրդային համակարգի մի գործիչ էր: Նա պարզապես իրագործում էր խորհրդային գաղափարաբանության դրույթները: Վերջիվերջո՝ մենք չպիտի մոռանանք, որ Ստալինը 1920-21թթ. դեռ բռնապետ չէր: Լենինն էր երկրի ղեկավարը: Եթե ուսումնասիրում ենք տվյալ ժամանակաշրջանի փաստաթղթերը, ապա կարող ենք միանշանակ ասել, որ այս կամ այն քաղաքական գործչի հայամետ կամ հակահայ գործունեությունից չէր կախված հայկական հողերի՝ Կարսի, Սուրմալուի, Նախիջեւանի, Արցախի ճակատագրերը: Դրանք խորհրդային գործելոճի, ծավալապաշտ կայսրության քմահաճությունների հետեւանք էին: Խորհրդային կայսրության կործանումից հետո Արցախը ստացավ բաղձալի ազատությունը: Դա նույնպես օրինաչափ երեւույթ է: Ընդհանուր առմամբ, խորհրդային գորշ կայսրությունը քաջ գիտակցում էր, որ հայ ժողովուրդը ձգտում է ազատության եւ անկախության: Այդ ամենը թշնամաբար էր ընդունվում: Խորհրդային իշխանությունները ձգտում էին խանձարուրի մեջ ճնշել ազատասիրական ամեն մի գաղափար: Եվ հենց այդ իշխանությունների իմացությամբ ու թողտվությամբ իրագործվեցին Ադրբեջանի, տվյալ դեպքում՝ Բաքվի հայության ջարդերը»:

Հ. ԱՎԱԳՅԱՆ

ԼՂՀ ԱԺ. Բաքվի հայության կոտորածը մինչ օրս համարժեք գնահատական չի ստացել

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի ատաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովը Բաքվի հայ բնակչության զանգվածային ջարդերի 26-րդ տարելիցի առիթով հանդես է եկել հայտարարությամբ: Հայտարարության մեջ մասնավորապես ասվում է.

«1990թ. հունվարի 13-19-ը Բաքվում ադրբեջանական իշխանությունների կողմից կազմակերպվել ու իրականացվել է հայ բնակչության զանգվածային կոտորած: Միայն իր ազգային պատկանելության համար տեղի շուրջ քառորդ միլիոն հայությունը ենթարկվել է բռնությունների, կոտորածի ու տեղահանման, ինչի հետեւանքով քաղաքն ամբողջությամբ հայաթափվել է: Թալանի ու բռնագրավման է ենթարկվել Բաքվի հազարավոր հայ բնակիչների անշարժ ու շարժական գույքը: Բռնություններին զոհ է գնացել ավելի քան 400 հայ, որի մասին վկայում են միջազգային իրավապաշտպան կազմակերպությունները:

Այդ օրերին Բաքվում տեղի ունեցած բռնությունները 1988թ. փետրվարին Սումգայիթում, իսկ այնուհետեւ՝ Ադրբեջանի հայաշատ այլ բնակավայրերում չդատապարտված ջարդերի շարունակությունն էին, որոնք իրականացվել են ԽՍՀՄ ղեկավարության իմացության եւ թողտվության պայմաններում ու Ադրբեջանի իշխանությունների կողմից պետական մակարդակով տարածվել նաեւ Լեռնային Ղարաբաղում»:

Նշվում է, որ Ադրբեջանի իշխանությունները ոչ միայն նենգափոխում են «սեւ հունվարի» էությունը, այլեւ լռության ու մոռացության են մատնում «երեք ջարդերի մայրաքաղաքի» պատմությունը՝ փորձելով կոծկել Բաքվում 1905թ., 1918թ. եւ 1990թ. կոտորածների ու ադրբեջանահայության հանդեպ իրականացրած ցեղասպանության քաղաքականության ակնհայտ հետեւանքները:

Բաքվի հայության դեմ իրականացված սոսկալի կոտորածը մինչ օրս համարժեք գնահատական չի ստացել: Ավելին, վերջին քսանվեց տարիներին օգտվելով անպատժելիությունից՝ Ադրբեջանի ղեկավարությունը հետեւողականորեն իրականացնում է հայատյացության պետական քաղաքականություն, որն ուղեկցվում է զինադադարի պարբերաբար խախտումներով եւ պատերազմի վերսկսման սպառնալիքներով:

«Հարգելով Բաքվի ջարդերին ու բռնատեղահանությանը զոհ գնացած անմեղ հայերի հիշատակը ու դատապարտելով այլատյացության, ծայրահեղականության եւ ահաբեկչության ցանկացած դրսեւորում՝ ԼՂՀ Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովը. վերահաստատում է, որ Բաքվի ջարդերը լիովին համապատասխանում են ՄԱԿ-ի 1948թ. «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու եւ պատժելու մասին» կոնվենցիայով սահմանված ցեղասպանության հանցագործության իրավական ձեւակերպմանը, պնդում է, որ Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետությունը հետեւողական է լինելու, որպեսզի ադրբեջանահայության ցեղասպանությունը կազմակերպողներն ու իրականացնողները, համաձայն միջազգային նորմերի, ենթարկվեն պատասխանատվության, կոչ է անում քաղաքակիրթ աշխարհին եւ խորհրդարանական կառույցներին՝ դատապարտել Բաքվի հայ բնակչության զանգվածային ջարդերը, դրանց տալ իրավական գնահատական»,-ասվում է հայտարարության մեջ:

ԼՂՀ Ազգային ժողով

Արթուր Աղաբեկյան. Հայ ազատամարտիկն իր ձեռքով գծեց Արցախի սահմանները

Հունվարի 28-ը Հայաստանի Հանրապետության տոնացույցում նշվում է որպես Բանակի օր: Այդ օրն ունի մեծ կարեւորություն հայ ժողովուրդի համար, քանի որ բանակն է մեր պետության ու ազգի գլխավոր պաշտպանը: Նրա հզորությունից է կախված բոլորիս ապագան: Օրվա կապակցությամբ «Ապառաժ»-ը զրուցել է ԼՂՀ փոխվարչապետ, ՀՅԴ անդամ, ՀՀ եւ ԼՂՀ պետական եւ ռազմական գործիչ, գեներալ-լեյտենանտ Արթուր Աղաբեկյանի հետ:

- Ինչպե՞ս եւ ի՞նչ հրամայականով ծնունդ առավ հայկական բանակը:

- Դեռ 1988թ., երբ Արցախի ժողովուրդը խաղաղ ցույցի էր դուրս եկել ու ակնկալում էր խորհրդային իշխանություններից, որ վերջապես Արցախը կվերամիավորվի Մայր Հայաստանին, նույն Խորհրդային Միության իշխանությունները դրդում էին ազերիներին, որպեսզի նրանք բռնությամբ ճնշեն Արցախյան շարժումը: Փառք Աստծո, այդ օրերին գտնվեցին անհատներ թե՛ Հայաստանում եւ թե՛ Արցախում, որոնք հեռուն նայելով՝ ամենուր խոսում էին ինքնապաշտպանության մասին: Հենց այդ անհատներն էին /կարծում եմ՝ պատմությունը հետագայում անուն առ անուն կանդրադառնա նրանց/, որոնք ինքնապաշտպանական ջոկատների ստեղծման ակունքներում էին: Հիշում եմ, որ 1988թ. աշնանը Արցախում արդեն կային ինքնապաշտպանական ջոկատներ: 1989թ., երբ ձեռքս ընկավ Նիկոլ Դումանի «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանության» գիրքը, ես հասկացա, որ մենք ճիշտ ճանապարհին ենք, քանի որ 1989թ. մենք արդեն ունեինք Նիկոլ Դումանի բնութագրած «մնայուն եւ ֆռռան ջոկատները»: Այս մնայուն եւ ֆռռան ջոկատները հետագայում դարձան հայկական Զինված ուժերի հիմքը:

Բանակաշինությունն ընթանում էր ինքնապաշտպանությանը զուգահեռ: Մի կողմից անհրաժեշտ էր բանակային ստորաբաժանումների ձեւավորումը, մյուս կողմից՝ ազերի օմոնականների դիմակայումը: Այսպիսով, հայ ազատամարտիկը գծում էր Արցախի սահմանները:

Բազում պետություններ իրենց կազմավորման ընթացքում ձեւավորել են Զինված ուժեր՝ զուտ դա ունենալու համար: Միգու՞ցե այդպես էլ այդ ուժերը չեն գործադրվել: Հայկական բանակը ստեղծման առաջին օրերից առ այսօր մնում է Հայաստանի եւ Արցախի լինելիության թիվ մեկ երաշխավորը:

- Ինչպե՞ս որոշվեց հունվարի 28-ը հռչակել Հայկական բանակի օր:

- Նախորդ տարիներին առիթներ ունեցել եմ այս հարցի շուրջ խոսելու: Հիշում եմ, երբ քննարկում էինք, թե որ օրը պետք է հռչակվի հայկական բանակի օր, կային բազում առաջարկներ: Մի խումբ ազատամարտիկներ փորձում էին որպես բանակի օր առաջարկել սեպտեմբերի 20-ը՝ Հատուկ գնդի ստեղծման օրը, սակայն Պաշտպանության նախարարությունը միանշանակ մերժեց այդ առաջարկը: Հետո առաջարկվեց Շուշիի ազատագրման օրը՝ մայիսի 9-ը սահմանել որպես հայոց բանակի օր: Երբ այդ ժամանակ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի մոտ քննարկում էինք առաջարկները, նա առաջարկեց գտնել այդ օրերի ՀՀ կառավարության որոշումները: Արխիվն ուսումնասիրելուց հետո պարզվեց, որ 1992 թ. հունվարի 28-ին կառավարության առաջին նիստում որոշում է կայացվել՝ ստեղծել Զինված ուժեր, եւ նույն օրը հրապարակվել է պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի N1 եւ N01 հրամանները: Այս քննարկումից հետո պաշտպանության նախարարությունը հանդես եկավ առաջարկությամբ՝ ՀՀ տոների եւ հիշատակների մասին օրենքում որպես Հայկական բանակի օր հռչակել հունվարի 28-ը:

- Ըստ Ձեզ՝ ո՞րն է հայկական բանակի մարտունակության գլխավոր գրավականը:

- Հայկական բանակի զինվոր թե սպա, շարքային թե գեներալ՝ գիտակցում է, որ օտարը չի երաշխավորելու իր ծնողի, իր ընտանիքի եւ, վերջապես, հայրենիքի անվտանգությունը: Հայ մարդը լավ գիտի, ինչու՞ չէ՝ իր մաշկի վրա զգացել է, որ եթե այսօր չունենայինք մարտունակ բանակ, աշխարհն այլ լեզվով կխոսեր ՀՀ-ի եւ ընդհանրապես հայ ժողովրդի հետ: Իսկ մեր մեծերը մեր ժողովրդին նորից կսկսեին պատմել թղթե շերեփի պատմությունը:

- Սահմանային իրավիճակը վերջին 2 տարիներին շարունակվում է գերլարվել, Ադրբեջանն անընդհատ նոր զենք ու զինամթերք է օգտագործում սահմանին: Ինչպե՞ս կգնահատեք սահմանին տիրող այսօրվա իրավիճակը:

- Պաշտպանական դոկտրինա ունեցող պետությունները զինված ուժերի կիրառման պլանները համապատասխանեցնում են հավանական եւ անհավանական հակառակորդների գործողություններին: Թե՛ ԼՂՀ-ն եւ թե՛ ՀՀ-ն հավանական եւ անհավանական հակառակորդներ չունեն: Մենք ունենք թշնամի երկիր, որը փորձում է ահաբեկել մեր ժողովրդին: Ուստի, մենք ժամանակ առ ժամանակ պարտավոր ենք վերանայել թե՛ մեր ռազմավարությունը եւ թե՛ մարտավարությունը: Մենք նախահարձակ լինելու անհրաժեշտություն չունենք, բայց թշնամու ցանկացած ոտնձգության պետք է տանք համարժեք պատասխան՝ թե՛ այսօր եւ թե՛ վաղը:

«ԱՊԱՌԱԺ»

Քայլող, բայց քչախոս կամավորը

Պատերազմի ժամանակ շատերն էին զինվորական հագուստ կրում, այսօր էլ շատերն են իրենց ազատամարտիկ անվանում, ոմանք էլ փորձում են հարեւանի կամ ընկերոջ արածն իրենց վերագրել, մեկ-մեկ էլ սեփական երեխաներին են խաբում ասելով՝ հայրդ այսքան-այնքան թուրք է խփել: Ոմանց կրծքներին, դիտմամբ, թե պատահմամբ, շքանշաններ են հայտնվում կամ աներեւակայելի աստղեր՝ ուսադիրներին: Ցավալի է, որ այս եղանակով երբեմն նաեւ պատերազմի սխալ դրվագներ ու պատմություն է մատուցվում սերունդներին: Իրական հերոսները միշտ խոսելու շատ քիչ բան են ունենում...

Իրական հերոսների մասին խոսելու ժամանակը հենց այսօր է...

Գագիկ Մարտիրոսյանն այն ազատամարտիկներից է, ով չի սիրում հարցազրույցներ տալ, նա դժվարությամբ համաձայնեց, ապա քմծիծաղով ավելացրեց. «Ի՞նչ պատմեմ, պատմողներ շատ կան, նրանք ամեն օր են պատմում եղած-չեղածից... Կան բաներ, որ դժվար է բառերով ներկայացնել, բայց... կփորձեմ»:

Կիրովաբադի գյուղատնտեսական ինստիտուտի ուսանող էր, երբ Արցախում արդեն բռնկվել էին Շարժման առաջին կայծերը: «Երբ եկա հայրենի Ասկերան, իմ դասընկեր Կարեն Ավանեսյանը ընդհատակյա գործեր էր անում, արդեն մտածում էին գաղտնի խմբեր կազմելու մասին, ես էլ սկսեցի հետաքրքրվել: Նրա հետ մի օր կազմակերպեցինք եւ «ռակետնիցայով» խփեցինք Խոջալուի ավտոբուսին: Խփեցինք ու փախանք: Հետո լսեցինք, որ ավտոբուսը հրդեհվել էր: Մենք արդեն հասկանում էինք, որ ազերիների հետ ապրելն այլեւս ինքնասպանություն էր... Ասկերանի գարեջրի գործարանում, որտեղ տղաները հսկողություն էին սահմանել, ես էլ միացա: Սակայն դեռ Շարժման ալիքի մեջ չմտած՝ ինձ խորհրդային բանակ զորակոչեցին: Ուշքս ու միտքս Արցախում էր: Հայրենիքից անտեղյակ էի այնտեղ, ոչ մի լուր չունեի, տարին մեկ անգամ էի նամակ ստանում, այն էլ՝ եթե հասնում էր...»:

Ծառայությունն ավարտելուց հետո՝ 1990-ին, գալիս է Արցախ: Կիրովականի մանկավարժական ինստիտուտի ուսանող էր այդ ժամանակ: Համալսարանի պրոֆմիության նախագահ Ֆելիքս Խաչատրյանը, տեսնելով ամրակազմ տղային, մի օր ասաց. «Որ պետք լինի՝ հայրենիքին կծառայե՞ս»: Հենց հիմա պատրաստ եմ՝ պատասխանեց: «Դե՝ ուրեմն պատրաստվիր, դասերի պահով չանհանգստանաս, «նեյավկաներ» չեն դնի»,- ասաց:

Այսպես, 1990-ի հոկտեմբերից սկսվեց նրա մարտական ուղին: Գագիկը հիշում է, թե ինչպես առաջին անգամ Եղծահողում տղաներն իրեն «փորձեցին»: «Եղծահողի պաշտպանությունն իմ առաջին մարտական մկրտությունն էր: Հիշում եմ՝ տղաները լուր տարածեցին, թե իբր ազերիները մեծ խմբերով մոտենում են եւ իբր թե պետք է նահանջել: Իմ ձեռքին զենք կար: Տղերքը մոտեցան ինձ ու ասացին՝ փախչում ենք, շտապիր: Ասացի՝ չէ, չեմ կարող, զենքս ձեռքիս կմնամ այստեղ: Մնացի դիրքում: Հետո իմացա, որ դա իմ փորձությունն էր, տղերքն ինձ փորձել էին...»:

Այնուհետեւ Գագիկը լծվեց զենքերի գաղտնի տեղափոխման գործին, ապա՝ Ասկերանի շրջանի մի շարք գյուղերի պաշտպանությանը, ինչպես նաեւ հետախուզական եւ դիվերսիոն գործողությունների կատարմանը:

«Ռուսի ֆորմա էինք հագնում, ճաղատացնում գլուխներս, մի «66» կար՝ ռուսական համարով, նստում էինք ու անցնում ազերիների պոստերով, մեր անելիքն անում ու հետ դառնում...»,- հիշում է ծիծաղով, հետո լռում՝ ասելով, որ այդ տղաներից շատերն այսօր չկան:

1992-ի Շուշիի ազատագրումը հիշում է աչքերի յուրօրինակ փայլով. «Մենք մուտք գործեցինք արեւյան ուղղությամբ. ես Հատուկ ջոկատում էի՝ Ֆելիքս Գաբրիելյանի գլխավորությամբ: Ձախ կողմում, Դուշման Վարդանն էր (նրանք կիրճի կողմից պարաններով են բարձրացել), իսկ աջից Աբոյի ջոկատն էր՝ Սզնեքի ջոկատը: Մենք մտանք բանտի կողմով: Մայիսի 8-ն էր: Տեսա՝ Բեկորը նստած է, ծխախոտ է ծխում ու նայում հեռուն: Մոտեցա, բարձրացրեց գլուխն ու ասաց՝ ծխախոտ կծխե՞ս: Բա թուրքե՞րը՝ ասացի ու զարմացա: «Թուրք չկա, ես շրջել եմ, փախել են ահից, երեկվա մարտերը դաժան էին, երեւի վախեցան ու փախան»: Ուրախությունից սիրտս ուռավ, բարձր ծիծաղեցի. «Տնաշեն, բա տենց բան կլինի, մի քանիսը գոնե մնային, կոտորեինք...»: «Ախր, իսկական տղաներ էին՝ Դուշման, Պետո, Բեկոր... առյուծասիրտ էին, - ավելացնում է կարճատեւ դադարից հետո,- ինձ միշտ թվում էր, որ երբ պատերազմն ավարտվի, նրանց ու նրանց նման տղաներին ժողովուրդը ձեռքերի վրա կբարձրացնի ու չի թողնի, որ ոտքները քարին դիպչի... Բոլորս էլ ռոմանտիկ էինք՝ համակված գալիքի երազներով: Այդ երազներում էր հենց մեր ուժը, մենք հայրենիքի վառ տեսլականով էինք մարտի գնում...»:

«Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշան ունի Գագիկը Մարտիրոսյանը, «Շուշիի ազատագրման համար» մեդալ եւ մի քանի այլ շքանշաններ, բայց ասում է քմծիծաղով. «Հիմա մեդալների դար է: Ով ասես՝ մեդալ ունի: Ամաչում ես ասես, որ մեդալ ունես... Գիտե՞ս, ես միշտ մտածել եմ, որ մի օր մեր հեռացած ընկերների առաջ հաշվետու պետք է լինենք բոլորս, ու երեւի շատ բաների համար ամաչենք...»:

Գագիկն այն անհատներից է, ով ականատեսն ու անմիջական մասնակիցն է հայկական կանոնավոր բանակի ստեղծմանը:

1991թ. սեպտեմբերին Գագիկը միացավ Դաշնակցության շարքերին: «Դաշնակցական ջոկատները միշտ իրար կողքի էին կռվում. այդպես հուսալի էր, գիտեինք, որ իրար թիկունք ենք...»:

1992-ին, Նախիջեւանիկի ազատագրման ժամանակ վիրավորվել է, բայց, ինչպես ինքն է ասում, ժամանակից շուտ է ապաքինվել եւ անմիջապես հետո մասնակցել Կուսապատի ազատագրմանն ու Գյուլաթաղ գյուղի պաշտպանությանը:

Նրա մարտական ուղին անցնում է Արցախի համարյա բոլոր շրջաններով: Առաջադրանքներն ու գործողությունները տարբեր էին, նվիրումը՝ նույնը: Շատ բան չի պատմում, երբեմն էլ լռում ու քիչ անց ինչոր դրվագ է հիշում, ապա ասում՝ դա չգրես, պետք չէ, շատ է երկարում պատմությունս...

Ճակատագրական մի դրվագ, համենայնդեպս, գրի առա: «1992-ին էր, ազերիները Առաջաձորի կողմով մտան Խաչենի ձորակ, որից հետո պատմական կռիվ եղավ առավոտից իրիկուն: 18 տարեկան տղաներ էին կռվում մեր կողքին /Իլիչի դասակն էր/: 15-16 հոգով գործը գլուխ բերվեց: Եթե չկարողանայինք, ազերիները կմտնեին Խնձրիստան, հետո՝ Ստեփանակերտ... Փոքր ուժերով մեծ առաջադրանքներ էինք կատարում, որովհետեւ գրագետ էինք կռվում, միասնաբար»:

«Շատ հաճախ, պատերազմի բովով անցած տղաների մոտ հուսահատություն եմ տեսնում ու հաճախ էլ հիշում եմ բոլորին անուն առ անուն: Մտածում եմ՝ ինչպե՞ս են ապրում այդ տղաները, ինչպե՞ս եղավ, որ ոմանք այսօր ռուսաստաններում են, ոմանք էլ մեր կողքին ու մոռացված. չէ՞ որ նրանք էլ ազատագրված հայրենիքի իրենց տեսլականն ունեին, նրանք էլ հաղթեցին այս պատերազմը: Նրանք, հաստատ, շքանշանների կարիք չունեն, բայց այս հայրենիքը, առաջին հերթին, նրանցն է...»:

Հերմինե ԱՎԱԳՅԱՆ

Քայլար Միքայելյան. Հանուն Արցախի՝ պետք է զորակոչի ենթարկենք Ավստրալիայի հայ համայնքը

Արդեն 18-րդ տարին է՝ Ավստրալիայում գործում է Արցախի ներկայացուցչությունը: Ներկայացուցչության աշխատանքները բազմաբնույթ են՝ տնտեսական ծրագրերից մինչեւ քաղաքական: 2015 թվականի հոկտեմբերի 22-ից Ավստրալիայում Արցախի Հանրապետությունն ունի նոր ներկայացուցիչ՝ ի դեմս Քայլար Միքայելյանի: Նա բազմավաստակ ուսուցիչ է, տարիներ շարունակ հանդիսացել է Սիդնեյի «Արշակ եւ Սոֆի Գոլստն» ամենօրյա վարժարանի տնօրենը, հայ ինքնության, ազգային լեզվամտածողության պահպանման եւ սփյուռքահայ սերնդի հայեցի կրթության ու դաստիարակության գործում ներդրած նշանակալի ավանդի համար 2009թ. հոկտեմբերի 4-ին պարգեւատրվել է ՀՀ վարչապետի հուշամեդալով:

Ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում Ավստրալիայում ԼՂՀ մշտական ներկայացուցիչ Քայլար Միքայելյանի բացառիկ հարցազրույցը «Ապառաժ»-ին:

- Ի՞նչ անելիքներ ունի Ավստրալիայում ԼՂՀ ներկայացուցչությունը եւ մոտակա ի՞նչ ծրագրեր են նախատեսվում:

- 2015թ. հոկտեմբերի 22-ին Արցախում էի, որտեղ ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի կողմից պաշտոնապես նշանակվեցի Ավստրալիայում ԼՂՀ մշտական ներկայացուցիչ: Արցախի նախագահն ու ԱԳ նախարար Կարեն Միրզոյանն ինձ հստակորեն ներկայացրին իրենց ակնկալիքները: Դրանք հիմնականում երեք ուղղությամբ էին: Առաջին հերթին՝ կարեւորվեց Ավստրալիայի հայ համայնքի եւ Արցախի հետ սերտ կապերի վերահաստատումը:

Ցավոք, պետք է նշեմ, որ Արցախում զինադարարից հետո, այսպես կոչված՝ համեմատաբար խաղաղ պայմանները որոշ չափով թուլացրել են այն կապերը, որ կային Արցախի եւ Սփյուռքի գաղթօջախների միջեւ, եւ անհրաժեշտ է այդ կապերի վերաշխուժացումը:

Մեր աշխատանքներն անմիջապես պետք է ուղղված լինեն Արցախի եւ Ավստրալիայի հայ համայնքի միջեւ կապերի սերտացմանը:

Երկրորդ հանձնարարականն այն է, որ վերջերս Ավստրալիայում աշխուժացել է թուրքական եւ ադրբեջանական համայնքների լոբբինգը, եւ անհրաժեշտ է հստակ մարտավարական քայլեր ձեռնարկել այդ ուղղությամբ:

Ավստրալիայում տարիներ շարունակ գործում է Թուրքիայի դեսպանատունը, իսկ անցյալ տարի Ավստրալիայի մայրաքաղաք Կանբերայում բացվեց Ադրբեջանի դեսպանատունը: Նրանք շարունակ հակահայկական աշխատանքներ են տանում թե՛ թուրքական, թե՛ ադրբեջանական դեսպանատների միջոցով, ինչպես նաեւ՝ հակաարցախյան քարոզչություն են իրականացնում Ավստրալիայի դաշնային խորհրդարանում: Այս ամենին հակազդելու գործը մենք պետք է կազմակերպենք՝ իբրեւ համայնք եւ իբրեւ ներկայացուցչություն:

Իհարկե, դժվար է նման ուժերի դեմ, որոնք մեծածավալ միջոցներ ունեն, հակազդեցություն ցուցաբերել, բայց եւ այնպես՝ չենք կարող լռել: Արցախի ներկայացուցչության աշխատանքը պետք է ուղղված լինի քաղաքական գործիչների հետ աշխատանքներին, մասնավորապես՝ հայկական տեսակետը եւ մոտեցումը այդ շրջանակներում տարածելուն:

Երրորդ հանձնարարականը, որ ստացա, տնտեսական կապերի հաստատումն է Արցախի հետ: Այդ ուղղությամբ մեր զրույցներում հստակ եղան, որ Արցախի ժողովուրդը ողորմություն չի խնդրում Սփյուռքից եւ սփյուռքահայ գործարարներից, այլ ակնկալում է նրանց մասնակցությունն Արցախի տնտեսության զարգացման գործին՝ ապահովելով նաեւ նրանց շահույթը:

Արցախը տնտեսական զարգացման մեծ հնարավորություններ ունի, եւ անհրաժեշտություն կա նոր գաղափարների գործադրման, նոր աշխատատեղերի, նոր գործարանների բացման՝ նպատակ ունենալով բարելավել Արցախի ժողովրդի կենսամակարդակը:

Այս երեք հիմնական աշխատանքների ուղղությամբ է, որ պետք է ծանրանա Ավստրալիայում Արցախի Հանրապետության ներկայացուցչության առաջիկա գործունեությունը:

- Քանի՞ հոգուց է բաղկացած Ավստրալիայի ԼՂՀ ներկայացուցչությունը:

- Ես՝ տիկնոջս եւ ընտանիքիս անմիջական զորակցությամբ՝ իբրեւ ներկայացուցիչ, եւ մեր ամբողջ համայնքը՝ իբրեւ ներկայացուցչություն: Ամբողջ համայնքը մտահոգված է Արցախով եւ Արցախի ժողովրդի բարօրությամբ: Ներկայացուցչությունը չակերտված մեկ անձ է այսօր, բայց վստահ եմ, որ ընդհանուր համայնքը, առանց բացառության, զորավիգ պետք է կանգնի մեր աշխատաքներին: Դեկտեմբերին Ավստրալիա էր այցելել Արցախի ԿԿ ներկայացուցիչ, ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության ղեկավար Դավիթ Իշխանյանը, ում ներկայությամբ ունեցանք հանդիպումներ համայնքի ղեկավարության, մի շարք կազմակերպությունների, եկեղեցիների, կուսակցությունների հետ: Հանդիպումների ընթացքում ներկայացրինք ներկայացուցչության առաջիկա անելիքներն ու ստացանք ամբողջ համայնքի աջակցությունը: Իմ նպատակն է՝ գալիք ամիսների ընթացքում հանդիպումներ ունենալ տեղի բոլոր հայկական կազմակերպությունների հետ, բացատրել մեր անելիքները եւ ստանալ նրանց զորակցությունը եւս:

- Երիտասարդությունն ի՞նչ անելիքներ ունի, եւ արդյո՞ք հետաքրքրված է Արցախի հարցով:

- Երիտասարդության անելիքները հսկայական են: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարիներ շարունակ անմիջական կապ եմ ունեցել հայկական ճեմարանի հետ, այսօր, բարեբախտաբար, շփումներ ունեմ երիտասարդների եւ աշակերտների հետ: Իրատես լինելով՝ պետք է նշեմ, որ այստեղի երիտասարդությունն այսօր իր առօրյա կյանքում ժամանակ չի ունենում լրջորեն զբաղվելու Արցախի հարցերով: Ես, իբրեւ ներկայացուցիչ, իմ պարտականությունը տեսնում եմ երիտասարդությանն Արցախի հետ շարունակական կապի մեջ պահելու մեջ: Պետք է ստեղծել առիթներ, որ Արցախ այցելեն, տեղյակ լինեն Արցախի ներքին կյանքին, ժողովրդին, դժվարություններին, ձեռքբերումներին եւ հաջողություններին: Վստահ եմ, որ երիտասարդությունն այդ հետաքրքրությունն ունի. մեզ մնում է միջոցներ ստեղծել, որպեսզի նրանք առօրյա կապ ունենան Արցախի հետ, եւ վստահ եմ՝ այդ ունենալու պարագայում շատ ավելի գործունյա կլինեն եւ իրենց աշխատանքները կուղղվեն դեպի Արցախ:

- 2012 թվականին Ավստրալիայի Նոր Հարավային Ուելս նահանգի օրենսդրական խորհուրդը միաձայն բանաձեւ է ընդունել Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի մասին: Այսօր Ավստրալիայի մյուս նահանգներում նմանօրինակ աշխատանքներ տարվու՞մ են արդյոք:

- Այդ աշխատանքը մեծամասնությամբ տարվեց Ավստրալիայի ՀՅԴ Հայ Դատի հանձնախմբի կողմից: Անշուշտ, Արցախի ներկայացուցչությունը եւս ունեցավ իր աշխատանքի բաժինը: Այսօր էլ լուրջ պետք է մտածենք, եւ մեր ուժերը կենտրոնացնենք դաշնային կառավարության, ի մասնավորի՝ Արտաքին գործերի նախարարության խողովակների վրա: Նահանգային մակարդակով նման բանաձեւերի ընդունումը խորհրդանշական կարեւորություն ունի, սակայն գործնականում մեր աշխատաքները պետք է ուղղված լինեն Ավստրալիայի արտաքին գործերի նախարարության քաղաքականությունը շեղելու ուղղությամբ, որովհետեւ որոշում առնողը վերջիվերջո լինելու է արտաքին գործերի նախարարությունը, ոչ թե նահանգային կառավարությունը: Դավիթ Իշխանյանի այցելությունն Ավստրալիա եւ հատկապես դաշնային խորհրդարան, հստակեցրեց, թե դեպի ուր պետք է ուղղենք մեր աշխատանքները:

- Թուրքական եւ ադրբեջանական համայնքների զարգացումն Ավստրալիայում ինչպիսի՞ վտանգներ է պարունակում, եւ այդ ուղղությամբ մեր աշխատանքներն ինչպիսի՞ն պետք է լինեն:

- Տարիներ առաջ, երբ ապրիլքսանչորսյան ցույցեր էինք կազմակերպում Ավստրալիայի թուրքական դեսպանատների առաջ, մեզ արձագանքող չկար, բացի նահանգային ոստիկանության աշխատակիցներից: Այսօր, երբ մենք որեւէ ցույցի ենք դուրս գալիս, մեր դեմ են ելնում թվով մեզ համահավասար ազգերի եւ թուրք համայնքների ներկայացուցիչներ: Ակնհայտ է, որ թուրքական եւ ադրբեջանական կառավարությունները մեծ գումարներ են ծախսում եւ զորակոչի են կանչում իրենց համայնքի ներկայացուցչիներին՝ հակազդելու հայկական որեւէ արդար պահանջի: Այդ իմաստով մեզ համար վտանգն այն է, որ այլեւս միայն մեր ձայնը չէ, որ լսելի է դառնում. հակառակ կողմի ձայնը եւս լսելի է, եւ այդ ձայնն աղավաղված պատմական իրողություններն է սոսկ տարածում:

Այսօր բավականին գումարներ են ծախսում համալսարաններում, որպեսզի կարողանան սիրաշահել ազդեցիկ դեմքերի՝ պրոֆեսորների, դասախոսների՝ մեջտեղ բերելու նրանց ուրացողական թեզերը, աղավաղելու, պղտորելու իրականությունը եւ ստեղծելու այնպիսի կացություն, որ մեր ձայնն այդ ամենի ֆոնին կորչի: Պետք է իրատես լինել եւ շեշտել, որ որոշ չափով նրանց դա հաջողվում է: Այսօր Ավստրալիայի խորհրդարանում կան խորհրդարանականներ, ովքեր Ադրբեջանի խոսափողն են, եւ հաճախ են հնչեցնում նրանց տեսակետները: Աշխատանքն ավելի է դժվարացել, սակայն իրականությունը դա է եւ դրանից փախչելն անիմաստ է: Մենք միշտ փոքր ուժերով, բայց գիտակցելով, որ արդարությունը մեր կողմն է, կաշխատենք, եւ վստահ եմ՝ կդիմակայենք այդ դժվարություններին: Պետք է զորակոչի ենթարկենք մեր համայնքը, որպեսզի շատ ավելի գործունյա լինեն: Արցախից ֆիզիկապես հեռու լինելը չպետք է պատճառ հանդիսանա, որ մենք մոռացության մատնենք Արցախը, ընդհակառակը՝ այն մեր առօրյա կյանքի մաս պետք է լինի: Մենք ամեն օր պետք է իմանանք, թե ինչ է կատարվում Արցախում, հետաքրքրված լինենք Հայաստանի, Արցախի սահմաններով, մտածենք՝ ինչպես կարող ենք հզորացնել Արցախը: Մի խոսքով՝ ստանձնենք «տանտիրոջ» կարգավիճակ եւ չգոհանանք մնալ լոկ զբոսաշրջիկներ մեր երկրում:

- Ինչպիսի՞նն է ԼՂՀ ներկայացուցչության կապը Ավստրալիայի ՀՅԴ կառույցի հետ:

- Ավստրալիայում, ինչպես այլ գաղութներում, Դաշնակցությունը միշտ էլ իր անսակարկ եւ անվարան զորակցությունն է ցուցաբերել Արցախին: Դաշնակցությունն Ավստրալիայում մեծ աշխատանք է տարել եւ տանում՝ ի նպաստ Արցախի: Ինչպես Դավիթ Իշխանյանը հայտարարեց՝ Արցախն առանց Դաշնակցության եւ հակառակը՝ իմաստ չունի այսօրվա մեր իրականության մեջ: Դաշնակցության ղեկավարության շնորհիվ հատուկ ջանքեր է գործադրվում՝ լուսարձակը նորից շեղելու դեպի Արցախ: Ինչպես նշել էի, 125 ամյակի առիթով Ավստրալիա էր հրավիրվել Դավիթ Իշխանյանը, եւ նրա ներկայությունը մեծ արձագանք ունեցավ մեր ընդհանուր համայնքի վրա: Նրա ելույթները ոչ միայն դաշնակցական շրջանակներում, այլեւ համայնքի բոլոր շրջանակներում բավական ոգեւորիչ էին:

Հարցազրույցը՝ Արմինե ՆԱՐԻՆՅԱՆԻ

Անհրաժե՞շտ է արդյոք ագրարային երկրում ունենալ ագրարային համալսարան

Հայաստանի Հանրապետության եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունների որոշումներով՝ 2008թ. օգոստոսին Արցախի պետական համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետի եւ Ստեփանակերտի պետական գյուղատնտեսական քոլեջի հիման վրա Ստեփանակերտում հիմնադրվել է Հայաստանի ագրարային համալսարանի մասնաճյուղ: 2015 թվականի ուսումնական տարվա սկզբից մասնաճյուղը տեղափոխվել է Շուշի, իսկ նույն թվականի դեկտեմբերի 28-ին ԼՂՀ կառավարության նիստում որոշում ընդունվեց «Շուշիի տեխնոլոգիական համալսարան հիմնադրամ» ստեղծելու մասին եւ նշվեց, որ այն ստեղծվելու է Հայաստանի ագրարային համալսարանի Շուշիի մասնաճյուղի հիման վրա:

Այս հարցի շուրջ «Ապառաժ»-ի թղթակիցը զրուցել է ագրարային համալսարանի ուսանողների հետ: Ուսանողները նախ նշեցին, որ ոչ մեկի սրտով չէր համալսարանի՝ Շուշի տեղափոխվելու որոշումը՝ կապված հեռավորության եւ հատկապես ձմռան ամիսներին մայրաքաղաքից Շուշի երթեւեկելու հետ: Սակայն ուսանողներն ի սկզբանե դժգոհություն չեն հայտնել՝ համոզված լինելով, որ ժամանակակից պայմաններով հագեցած շենքում կկարողանան ավելի բարձր մակարդակի ուսում ստանալ:

«Մենք հարգում ենք մեր կառավարության որոշումը, սակայն, մեր կարծիքով, պետք է հաշվի առնվի նաեւ մեր սահմանադրական իրավունքները: Եթե մենք, ստորագրելով պայմանագիր, ընդունվել ենք Հայաստանի ազգային ագրարային համալսարանը, ապա պետք է, որ այն էլ ավարտենք, այլ ոչ թե մեզ տեղափոխեն այլ ԲՈՒՀ կամ առանց մեր իմացության եւ համաձայնության ինչ-որ այլ որոշումներ կայացվեն,- նշում են ագրարային համալսարանի ուսանողները,- անհանգստացնող այն է, որ այդ շենքը կառուցվել է մեզ՝ ագրարային համալսարանի ուսանողներիս համար եւ ոչ թե մեկ այլ ուրիշ հաստատության: Ճիշտ չէ, որ կառավարությունն ամեն տարի այդ որոշումը փոփոխության է ենթարկում, եւ մենք հայտնվում ենք ծիծաղելի իրավիճակում»:

2016թ. հունվարի 28-ին կայացած՝ ԼՂՀ արդարադատության նախարար Արարատ Դանիելյանի մամուլի ասուլիսի ժամանակ՝ նախարարը, պատասխանելով լրագրողի այն հարցին, թե արդյո՞ք հնարավոր է, որ այդ որոշումը վերանայվել կամ փոխվել է օրենքի սահմաններում, նախարարը նշել է, որ կառավարության ցանկացած որոշում ընդունվում է օրենքին համապատասխան, սակայն եթե ուսանողը գտնում է, որ համալսարանի հետ կնքված պայմանագրի պայմանները չեն պահպանվում, նա կարող է դիմել դատարան:

Անդրադառնալով կառավարության նշյալ որոշմանը՝ ԼՂՀ վարչապետի մամուլի քարտուղար Արտակ Բեգլարյանը նշեց, որ 2008 թվականին ընդունված որոշումը ջուրը չի գցվում, այլ ուղղակի զարգանում է փոքր-ինչ այլ ուղղությամբ:

«Ագրարային համալսարանի կատարած աշխատանքը եւ ձեռք բերած փորձը ջուրը չի գցվում, ուղղակի շարունակվում է տեխնոլոգիական համալսարանի անվան տակ: Այդ որոշումը տրանսֆորմացիայի է ենթարկվում եւ ագրարային համալսարանի հիմքի վրա ստեղծվելու է տեխնոլոգիական համալսարան, որտեղ պահպանվելու են ագրարային հիմնական մասնագիտությունները»,- ասաց Արտակ Բեգլարյանը, եւ նշեց, որ այդ ծրագիրը երկարաժամկետ նպատակներ ունի, եւ չպետք է շտապել գնահատականների հարցում:

Ուսանողներին մտահոգում էր նաեւ դիպլոմների եւ ուսման վարձի խնդիրը. ի՞նչ տեսակի ավարտական դիպլոմ են ստանալու համալսարանում ներկա պահին սովորող ուսանողները, եւ կփոխվի՝ արդյոք նրանց ուսման վարձի գումարը:

Այս հարցերի պատասխանները պարզելու համար դարձյալ դիմեցինք ԼՂՀ վարչապետի մամլո քարտուղար Արտակ Բեգլարյանին: Նա նշեց, որ կնքված պայմանագրի համապատասխան՝ ուսանողն օրենսդրական երաշխիքներ ունի, եւ նրա ուսման վարձի չափը չի փոխվելու, ու նույն պայմանագրի համապատասխան էլ՝ ներկա ուսանողները կստանան ավարտական դիպլոմ այն համալսարանից, որի հետ պայմանագիր են կնքել, այսինքն՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարանից»:

«Ուսանողների բոլոր իրավունքները պաշտպանված են այս որոշման արդյունքում, եւ կառավարությունը առավելագույնս հաշվի է առնելու նրանց կարծիքներն իր հետագա որոշումների կայացման ժամանակ: Ընդհանրապես մտահոգվելու հարց չկա, վարչապետն էլ է նշել նրանց հետ զրույցում, որ իրենց շահերն ու իրավունքները չեն անտեսվելու: Ոչ ոք իր կամքին հակառակ չի տեղափոխվելու «Շուշիի տեխնոլոգիական համալսարան», եւ, ինչպես նշեցի, ստանալու են իրենց ցանկացած դիպլոմը: Իսկ ինչ վերաբերում է նոր կառուցված շենքին, ապա այն պետական գույք է, եւ կառավարությունն է տնօրինում դրա ճակատագիրը, որի հետ ուսանողները որեւէ առնչություն չունեն: Համոզված եմ, որ կարճ ժամանակ անց ուսանողներն իրենք են տեսնելու «Շուշիի տեխնոլոգիական համալսարանի» ձեռքբերումները, որը նոր շունչ է բերելու Արցախի կրթական համակարգին. միայն պետք է վստահել եւ համբերել»,- ասաց վարչապետի մամուլի քարտուղարը:

Ուսանողների ծնողները եւս հուզված ու մտահոգ էին այս հարցով: Նրանց հուզող հարցերից էր զինծառայության մեջ գտնվող ուսանողների ճակատագիրը:

«Մեզ հուզում է այն հարցը, թե մեր որդիները, հայրենիքի պաշտպանության գործում իրենց ծառայությունն ավարտելուց հետո որտե՞ղ են սովորելու եւ ի՞նչ անվանում է ունենալու իրենց ապագա կրթօջախը»,- նշել են մի խումբ ծնողներ:

Վարչապետի մամլո քարտուղարի փոխանցմամբ՝ զինծառայության մեջ գտնվող ուսանողների հարցը դեռ քննարկվում է, բայց գլխավորն այն է, որ ինչ պայմանագիր կնքվել է ուսանողի հետ, այդ պայմանագրի շրջանակներում էլ հարցը լուծում կստանա: Նա պարզաբանեց, որ նրանք եւս դիպլոմի եւ վարձի փոփոխության խնդիր չեն ունենալու, իսկ մնացածը տեխնիկական կարգավորման հարց է:

Ծնողների հուզում էր նաեւ միջին մասնագիտական կրթական ծրագրերի կենտրոնում սովորող ուսանողների ճակատագիրը: Ժամանակին գերազանց եւ առաջադեմ ուսանողներն արտոնյալ պայմաններով ուսումը շարունակում էին ԼՂՀ մայր ԲՈՒՀ-ի անմիջապես 2-րդ կուրսից՝ առանց քննության եւ անվճար: Արդյո՞ք կառուցվածքային փոփոխություններից հետո այդ արտոնությունը պահպանվելու է:

Ա. Բեգլարյանի խոսքով՝ միջին մասնագիտական հաստատությունում սովորող ուսանողներն իրենց ուսումը, նախնական քննարկումների տվյալներով, շարունակելու են տեխնոլոգիական համալսարանի Ագրարային բաժիններում՝ պահպանելով որոշակի արտոնություններ:

«Տեխնոլոգիական համալսարանն էլ է ընդունելու այդ ուսանողներին: Իսկ ինչ վերաբերում է տնտեսագիտական ֆակուլտետի՝ ԱրՊՀ տեղափոխելու տեխնիկական մանրամասներին, ապա այդ հարցը դեռ քննարկման փուլում է, քանի որ տարիների ընթացքում է անցումը կատարվելու,- նշեց նա եւ ավելացրեց,- ուսանողների եւ դասախոսների հետ նույնպես քննարկվելու է այս հարցը, եւ նրանց մոտեցումները եւս հաշվի կառնվեն»:

Եթե ուսանողների պահով հարցը լուծվում է, ապա ի՞նչ է լինելու մասնագետների հետ: Այս հարցի վերաբերյալ Ա. Բեգլարյանն ասաց, որ տեխնոլոգիական համալսարանում դասավանդվելու են ագրարային հիմնական մասնագիտությունները, եւ, բնականաբար, ագրարայինի մասնագետների կարիք կլինի:

Ագրարային համալսարանի դասախոսները, սակայն, թերահավատորեն են մոտենում խնդրի այս լուծմանը: Տեխնոլոգիական համալսարանն ավելի քիչ ագրարային մասնագիտություններով է ընդունելություն կատարելու, իսկ ԱրՊՀ տեղափոխելու արդյունքում իրենք դասաժամեր են կորցնելու: Եվ դեռ պարզ չէ՝ արդյո՞ք բոլոր մասնագետներն են ընդգրկվելու այդ համալսարաններում:

«Ապառաժ»-ի հետ զրույցում ԼՂՀ Կրթության, գիտության եւ սպորտի նախարար Սլավա Ասրյանը այս վերաբերյալ հարցին պատասխանելով, նշել է, որ պետությունն անելու է հնարավորինը, որպեսզի բոլոր մասնագետներն ապահովվեն աշխատանքով:

«Եթե անհրաժեշտություն լինի, թոշակառու մասնագետները պետք է զիջեն իրենց տեղը երիտասարդ մասնագետներին, եւ ըստ գիտական կոչումների՝ ագրարային համալսարանի դասախոսներն ընդգրկվելու են տեխնոլոգիական եւ Արցախի պետական համալսարանի դասախոսական կազմում»,- ասել է Ս. Ասրյանը:

Ագրարային համալսարանի դասախոսական կազմը դեմ չէ տեխնոլոգիական համալսարան բացելուն, սակայն, ինչպես ասացին, նրանց մտահոգում է իրենց եւ իրենց ուսանողների ճակատագրերը:

«Տեխնոլոգիական համալսարանի տնտեսագիտական բլոկը միայն ագրոբիզնես մասնագիտությունն ունի, ու, քանի որ ագրոբիզնես մասնագիտության ամբիոնում դասավանդում են 20 հիմնական դասախոսներ, բնականաբար, մենք չենք պատկերացնում, թե ինչպե՞ս է լուծվելու մեր խնդիրը,- նշում են համալսարանի դասախոսները,- փաստացի, այսօրվա դրությամբ, մենք մնում ենք անորոշության մեջ, որովհետեւ չգիտենք, թե ինչպիսի՞ն կլինի մեր ապագան, կունենանք գործազուրկի կարգավիճա՞կ, թե՞ կլինենք աշխատանքով ապահովված»:

Ագրարային համալսարանի դասախոսների պայմանագրերը մեկ տարվա ժամկետով է կնքվում: Այդ պատճառով՝ ոչ մի դասախոս «ապահովագրված չէ»:

ԱրՊՀ-ի ուսումնական գծով պրոռեկտոր Գեորգի Սահակյանը մեզ հետ ունեցած հեռախոսազրույցի ժամանակ նշել է, որ առ այժմ ոչինչ հստակեցված չէ:

«Ուղղակի կա գաղափար, բայց բոլոր հարցերը դեռ պարզաբանման կարիք ունեն: Մենք չգիտենք, թե Ագրարային համալսարանից քանի ուսանող է տեղափոխվելու Արցախի պետական համալսարան եւ արդյոք ուսանողները կգա՞ն, թե՞ չէ: Չգիտենք նաեւ, թե ինչ է լինելու Ագրարային համալսարանի դասախոսների հետ. Ընդունելո՞ւ ենք նրանց, թե՞ ոչ: Կրթության նախարարության միջնորդությամբ այդ հարցերի պատասխանները ժամանակի ընթացքում պարզաբանվելու են»,- նշել է Գեորգի Սահակյանը:

Տնտեսագիտական ֆակուլտետում ԱրՊՀ-ն ունի երկու ամբիոն՝ ֆինանսահաշվային, որտեղ դասավանդում են 6 հիմնական դասախոսներ, եւ տնտեսագիտության տեսության ամբիոն՝ 8 հիմնական աշխատողներով: Բացի դրանից, տնտեսագիտության ֆակուլտետում դասավանդում են նաեւ ժամավճարային դասախոսներ: Դասախոսներից 4-ն ունեն գիտական կոչումներ:

Պրոռեկտորի խոսքով՝ այդ ֆակուլտետում թոշակառու դասախոսները քիչ են, եւ հիմնականում դասավանդում են երիտասարդ մասնագետներ: Իսկ տնտեսագիտության ֆակուլտետի առկա եւ հեռակա բաժիններում սովորում են մոտ 290 ուսանողներ:

Բնականաբար, ԱրՊՀ-ն ժամաքանակով է ապահովում իրենց աշխատողներին, իսկ ագրարային համալսարանի դասախոսներին ընդունելու դեպքում՝ ժամաքանակը քիչ է լինելու, ստացած գումարը նույնպես:

Այսօրվա պայմաններում մենք կկարողանա՞նք հոգալ մեր ընտանիքի հոգսերը: Այս հարցն են առաջ քաշում դասախոսները:

Ստեփանակերտում ագրարային համալսարանի մասնաճյուղ հիմնադրելուց հետո առաջ քաշվեց գիտության ոլորտում կայացած մասնագետների խնդիրը, եւ Հայաստանի ագրարային համալսարանն արտոնություններ ընձեռեց Արցախի դասախոսներին՝ անվճար հիմունքներով ուսում ստանալու համար:

«Այսօր, երբ հետադարձ հայացք ենք ձգում, ստացվում է այնպես, որ երբ որ մենք հասել ենք կայացման այս փուլին ու մեր կատարած աշխատանքի մեջ հեռանկարներ ու առաջընթաց պետք է տեսնենք, հայտնվել ենք անորոշ վիճակում,- նշում են որոշ դասախոսներ,- մեր կատարած աշխատանքը, մեր այդքան տարիների տանջանքները, փաստորեն, կարող է լինի իզուր եւ անիմաստ: Ինչի՞ համար ենք մենք այսքան ջանք թափել, որ այսօր չգիտենք էլ՝ որպես երիտասարդ գիտնականներ պե՞տք կգանք մեր պետությանը, թե՞ ոչ...»:

Փոփոխությունների դեպքում, կիսով չափ կրճատվելու է ուսումնական դասաքանակը, եւ ամեն տարվա ավարտական կուրսի հետ կրճատվելու են նաեւ աշխատատեղերը:

Ագրարային համալսարանի դասախոսական կազմն ընդգրկում է նաեւ համալսարանն ավարտած մի քանի ուսանողների, ովքեր որոշ ժամանակ փորձ ստանալուց հետո անցնում են աշխատանքի:

«Մեզ համար անորոշ են հետագա մեր անելիքները եւ հնարավորությունները: Մենք սովորել ենք՝ ակնկալելով, որ կկարողանանք մեր սիրած աշխատանքն անել հենց Ագրարային համալսարանում: Մեր մասնագիտական գիտելիքներն ու մեր ձեռք բերած փորձը, ըստ էության, ո՞ւմ է պետք գալու, եւ, վերջին հաշվով, ագրարային ոլորտի տնտեսագետները, ովքեր անհրաժեշտ են մեր երկրին, ինչո՞վ պիտի զբաղվեն, ինչո՞վ պիտի կարողանան իրենց արդյունավետությունը եւ նպաստը բերեն մեր պետականաշինության գործում»,- նշում են երիտասարդ դասախոսները:

Համալսարանում կան նաեւ դասախոսներ, ովքեր նախընտրելով ավելի հմտանալ այս բնագավառում՝ թողել են պետական համակարգում իրենց աշխատանքը եւ տրվել ագրարային ոլորտի մասնագետների պատրաստման գործին:

«Եթե ժամանակին իմանայի, որ ագրարային համալսարանի ծրագիրը ժամանակավոր բնույթ է կրելու եւ հետագայում այն փոխարինվելու է տեխնոլոգիական համալսարանով, ապա, բնականաբար, աշխատանքս չէի թողնի, եւ այսօր նոր աշխատանք գտնելու փաստի առաջ կանգնած չէի լինի... Եթե ագրարային համալսարանը չէր կարողանում կրթել եւ թողարկել գյուղատնտեսության բնագավառի մասնագետներ, ապա գու՞ցե տեսնեին խնդիրը ինչումն է, գո՞ւցե մի հարց կա, որ այդ հարցի լուծումով կարելի լինի որակյալ մասնագետներ պատրաստել եւ ոչ թե ԱրՊՀ չընդունվող բոլոր ուսանողներին անխտիր ընդունեն ագրարային համալսարան: Իսկ այստեղ, հասկանալի է, ե՛ւ վարձավճարն է հարմար, ե՛ւ անվճար տեղերը կան: Սկզբում պետք է մտածել կրթության որակի մասին եւ ոչ թե միանգամից ուրիշ ծրագրի մասին...»,- ասում է մի երիտասարդ դասախոս:

Հ.Գ.- *Հակառակ մեր պնդումի՝ դասախոսները խնդրեցին, որ իրենց անունները չհրապարակենք: Սա է մեր իրականությունը: Իսկ մենք փորձեցինք ներկայացնել առկա խնդիրը՝ հավատացած լինելով, որ այն կլուծվի անաչառորեն:*

Լ. ԹԵՎՈՍՅԱՆ

Տեղի է ունեցել ՀՅԴ երիտասարդական եւ ուսանողական միությունների ներկայացուցիչների համահայկական խորհրդաժողովը

ՀՅԴ Բյուրոյի Երիտասարդական գրասենյակի հրավերով հունվարի 21-23-ը ՀՅԴ Երեւանի «Արամ Մանուկյան» երիտասարդական կենտրոնում տեղի է ունեցել ՀՅԴ երիտասարդական եւ ուսանողական միությունների ներկայացուցիչների համահայկական խորհրդաժողով:

Խորհրդաժողովին ներկա էին ՀՅԴ Բյուրոյի անդամ եւ երիտասարդական հարցերի պատասխանատու Վիգեն Յագուբյանը, ՀՅԴ Բյուրոյի երիտասարդական գրասենյակի պատասխանատու Սարգիս Մկրտչյանը, ՀՅԴ Բյուրոյի անդամ Կիրո Մանոյանը:

Խորհրդաժողովին մասնակցում էին աշխարհում գործող ՀՅԴ երիտասարդական 20 միությունների 30 ներկայացուցիչներ՝ Հայաստանից, Արցախից, Կանադայից, ԱՄՆ Արեւմտյան շրջանից, Ֆրանսիայից, Նիդերլանդներից, Լիբանանից, Իրանից, Սիրիայից, Շվեդիայից, Ավստրիայից:

ՀՅԴ երիտասարդական եւ ուսանողական միությունների ներկայացուցիչները քննարկել են միությունների կազմակերպական խնդիրները, Սփյուռքում հայապահպանության խնդիրները, դաշնակցական երիտասարդների գաղափարաքաղաքական պատրաստվածությունը, ՀՀ ներքաղաքական եւ ընկերային իրավիճակը եւ արտաքին հիմնախնդիրներին առընչվող հարցեր:

Ներկայացուցիչները ներկայացրել են միությունների անցած երկու տարվա գործունեության զեկույցները եւ տեղեկացել ՀՅԴ Բյուրոյի երիտասարդական գրասենյակի աշխատանքների ու որդեգրած քաղաքական ուղեգծի մասին, ապա՝ քննարկել նոր ծրագրեր:

Եռօրյա նիստերի օրակարգում քննարկվել է նաեւ Հայաստանում եւ Արցախում կազմակերպվող պատանեկան ճամբարների ծրագրերը: Քննարկման արդյունքում որոշվել է, որ պետք է շարունակել հայրենիքում ամառային ճամբարների կազմակերպումը, ընդլայնել գործունեության ոլորտն ու նոր մեխանիզմներ կիրառել գալիք երկու տարիների ընթացքում:

Քննարկվել է միջազգային երիտասարդական կազմակերպությունների շրջանակներում ՀՅԴ երիտասարդականի առաջիկա գործունեության առաջնահերթությունները եւ անելիքները:

Ժողովականները կարեւորել են դաստիարակչական արդի նյութերի անհրաժեշտությունը: Շեշտվել է, որ անհրաժեշտ է քարոզչական նոր ձեւեր կիրառել՝ միությունների աշխատանքների մասին լրատվությունն ավելի արագ ու ավելի լայն շրջանակի հասցնելու նպատակով:

Խորհրդաժողովի անդամները, անդրադառնալով երկրում առկա ընկերային բազմաթիվ հարցերին, որոնցից են հայրենի երիտասարդության ու ուսանողության խնդիրները, վերահաստատել են, որ վճռականորեն շարունակելու են բարձրաձայնել այդ հարցերը եւ պայքարելու են ընկերային արդարության հաստատման ուղղությամբ:

Ժողովը հաստատել է, որ Դաշնակցության համահայկական կառույցների միջոցով պետք է շարունակել համախմբել Սփյուռքի եւ հայրենիքի երիտասարդությանն ազգային, քաղաքական եւ գաղափարական հարցերի շուրջ:

Որոշվել է՝ ապահովել բոլոր շրջանների համադրված աշխատանքները՝ դիմադրելու եւ հակազդելու Թուրքիայի եւ Ադրբեջանի պետական եւ լոբբիստական խմբերի հակահայկական աշխատանքներին եւ տարածվող ապատեղեկատվությանը:

Խորհրդաժաողովի ավարտին բոլոր շրջանները վերահաստատել են իրենց հանձնարարությունները՝ ամբողջական ուժերով ծառայելու հայ ազգի ու հայրենիքի շահերին եւ Հայ Դատի պահանջատիրական պայքարին:

Սեփ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Մեր Սուրբը Սարգիսն է, ոչ թե Վալենտինը. Տեր Մինաս քահանա



Այս տարի Հայ Առաքելական եկեղեցին Սուրբ Սարգիս զորավարի տոնը՝ Երիտասարդների օրհնության օրը, տոնել է հունվարի 23-ին: Aparaj.am-ի թղթակիցն այս թեմայի շուրջ զրուցել է Ստեփանակերտի Սուրբ Հակոբ եկեղեցու հոգեւոր հայր Տեր Մինաս քահանա Մովսիսյանի հետ:

- Ե՞րբ է նշվում Սուրբ Սարգիս զորավարի տոնը եւ ի՞նչ խորհուրդ ունի այն:

- Բյուզանդական Վաղես կայսրն արիոսական աղանդի հետեւորդ էր եւ հալածում էր քրիստոնյաներին: Այդ պատճառով նրան սպանում են քրիստոնեության համար պայքարած սուրբ նահատակները, որոնց միանում է նաեւ Սուրբ Սարգիսը:

Ամենայն Հայոց Գարեգին Բ Հայրապետի տնօրինությամբ՝ Սբ.Սարգիս զորավարի տոնը հռչակվել է Երիտասարդների օրհնության օր: Տոնը շարժական է, եւ այս տարի նշվել է հունվարի 23-ին:

Սուրբ Սարգիս զորավարն ամենասիրված սրբերից է: Իր որդու՝ Մարտիրոսի եւ 14 քաջ մարտիկների հետ նա նահատակվել է հանուն քրիստոնեական հավատքի: Արիության համար Սուրբ Սարգիսը Մեծն Կոստանդիանոս կայսեր (285-337թթ.) կողմից կարգվել է իշխան եւ սպարապետ՝ Հայաստանին սահմանակից Կապադովկիայում:

Նա ոչ միայն գերազանց սպարապետ էր, այլեւ՝ հիանալի քարոզիչ: Օգտվելով կայսեր հոժարությունից՝ իր իշխանության տակ գտնվող քաղաքներում քանդել է մեհյաններ, կառուցել եկեղեցիներ, տարածել քրիստոնեությունը: Երբ Հուլիանոս Ուրացողի թագավորության օրոք (360-363թթ.) սկսվում են Քրիստոսի եկեղեցու հալածանքները, Սուրբ Սարգիսն աստվածային հայտնությամբ հրաման առնելով՝ հեռանում է կայսրության սահմաններից, իր որդի Մարտիրոսի հետ գալիս, ապաստանում է քրիստոնյա Հայաստանում, ուր թագավորում էր Տիրան արքան՝ Մեծն Տրդատի թոռը՝ Խոսրովի որդին:

Տեղեկանալով, որ Հուլիանոսը մեծ զորքով շարժվում է Պարսկաստան, հայոց արքան, ձգտելով իր երկիրը զերծ պահել հարձակման վտանգից, հորդորում է Սարգսին ծառայության անցնել Շապուհի մոտ: Շապուհը սիրով ընդունում է Սարգսին եւ նշանակում նրան զորագնդերի հրամանատար: Զորականներից շատերը, տեսնելով փայլուն զորավարի բարեպաշտությունն ու վարքով վկայած նվիրումն առ Աստված, աղոթքներով Տիրոջ գործած հրաշքները, հրաժարվում էին հեթանոսությունից եւ դառնում քրիստոնյա: Սակայն Շապուհը պահանջում է նրանից պաշտել կրակը եւ զոհ մատուցել: Զորավարը մերժում է՝ ասելով. «Երկրպագելի է մեկ Աստված՝ Ամենասուրբ Երրորդությունը, ով ստեղծել է երկինքն ու երկիրը: Իսկ կրակը կամ կուռքերը ի բնե աստվածներ չեն, հողեղեն մարդը դրանք կարող է փչացնել»:

Այդ խոսքերից հետո Սուրբ Սարգիսը կործանում է բագինը: Զայրացած ամբոխը հարձակվում է Սուրբ Սարգսի եւ նրա որդու վրա: Առաջինը նահատակության պսակն ընդունում է նրա որդին՝ Մարտիրոսը: Սուրբ Սարգիսը բանտարկվում է եւ, աներեր մնալով իր հավատքի մեջ, գլխատվում: Քրիստոնեական հավատքի համար նահատակվում են նաեւ Սուրբ Սարգսին հավատարիմ տասնչորս զինվորներ: Հավատացյալները նահատակների մարմիններն ամփոփում են Համիան քաղաքում: Սուրբ Մեսրոպ Մաշտոց վարդապետը Սարգսի մասունքները բերել է Կարբի (Աշտարակի շրջան) եւ տեղում կառուցել երանելու անունը կրող եկեղեցի:

- Ինչպե՞ս է նշվում տոնը:

Սուրբ Սարգիս Զորավարի տոնը Հայաստանում եւ Արցախում ընդունված է նշել ոչ միայն եկեղեցական ծեսով, աղոթքով, այլեւ՝ ժողովրդական սովորույթներով, որը մեզանում նվիրական ավանդություն է: Սուրբ Սարգիս զորավարը երիտասարդների արագահաս բարեխոսն է: Նրա միջնորդությամբ հրաշքներ են տեղի ունենում: Այդ օրը երիտասարդներն աղոթում են սրբին, որ իրենց աղոթքները հասցնի առ Աստված: Սարգիսը սիրո երազանքն իրականացնող սուրբ է: Սարգսի մասին բազմաթիվ ավանդապատումներ կան: Տոնը երիտասարդների ամենասիրելի տոներից մեկն է: Սուրբը համարվում է սիրահարների, ինչպես նաեւ զինվորների պաշտպանը: Տոնի նախորդ ուրբաթ երեկոյան, համաձայն ժողովրդական սովորության, երիտասարդներն աղի բլիթ են ուտում, որպեսզի սրբի բարեխոսությամբ երազում տեսնեն իրենց ջուր տվող կյանքի ապագա ընկերոջը: Այդ օրը հիշատակելի սովորություններից է՝ փոխինձով մատուցարանը դնել տան տանիքին կամ պատշգամբին եւ սպասել Սուրբ Սարգսի զորավարի ձիու պայտի հետքին: Ըստ ավանդույթի՝ Սարգիսը պետք է հրեշտակների ուղեկցությամբ անցնի եւ ում մատուցարանի մեջ դրված ալյուրի կամ փոխինձի մեջ թողնի իր սպիտակ ձիու պայտի հետքը, այդ տարի կիրականանա հավատացյալի երազանքը:

- Երիտասարդները դեռ շարունակում են Սուրբ Վալենտինի տոնի նշումը, թեեւ այդ անունով մենք հայ սուրբ չենք ունեցել եւ մեզ համար այդ տոնը Սուրբ Սարգսի տոնն է: Ի՞նչ եք կարծում՝ ինչի՞ հետեւանք է սա:

- Սուրբ Վալենտին կոչվող տոնը ոչ մի կապ չունի հայերի հետ, չգիտենք նույնիսկ թե ինչպես է հայությունը սկսել նշել այդ տոնը: Հայ ժողովրդի տոների շարքին ավելացած այս տոնի նշումը զարմանալի ու միաժամանակ մտահոգիչ է: Դա երեւի պայմանավորված է նրանով, որ մեր ժողովուրդը ձգտում է համաշխարհայնացման: Հայ Առաքելական եկեղեցին մտահոգված է այդ փաստով եւ այդ պատճառով Սուրբ Սարգսի տոնը նշվում է մեծ շուքով՝ երիտասարդներին ապացուցելու, որ հարազատ տոները շատ ավելի խորհրդանշական են եւ բարի: Տոնի՝ ըստ արժանվույն նշելը նպաստում է նաեւ մեր տոնացանկից Վալենտինի տոնի դուրս մղմանը:

Մենք պետք է հետեւենք Հռոմի եկեղեցու օրինակին, երբ Կաթոլիկ եկեղեցին Սուրբ ծնունդը որոշեց նշել դեկտեմբերի 25-ին, որովհետեւ չէր կարողանում ձերբազատվել հեթանոսական Արեւի տոնի նշումից, որը նշվում էր այդ օրը: Հայ Առաքելական եկեղեցին պետք է անի նույնը՝ օտար տոները հնարավորինս հեռու պահելու համար:

- Ընդհանրապես ի՞նչ աշխատանքներ են տարվում եկեղեցու կողմից՝ Հայ Առաքելական եկեղեցու քարոզչությունը տարածելու, ամրապնդելու եւ երիտասարդներին ուղղորդելու առումով:

- Հայ Առաքելական եկեղեցին իր աշխատանքները տանում է հատուկ ծրագրով, եւ կազմակերպում է ժամերգություններ, պատարագներ, որոնց ժամանակ շփվում է նաեւ երիտասարդների հետ եւ Աստծո խոսքը փոխանցելով՝ փորձում ուղղորդել: Իմ կարծիքով՝ քարոզչությունը սխալ երեւույթ է, որովհետեւ քարոզչության քողի տակ պաշտամունք են մատուցում աղանդավորները: Եկեղեցին այսօր անում է այն, ինչ- որ պետք է կատարի, եւ ավելին անում է այն դեպքում, երբ ժողովուրդն է պահանջում: Եթե հաշվենք, ապա վիճակագրական տվյալների համաձայն՝ կտեսնենք, որ մեր հասարակության 10 տոկոսն է խաբվել եւ սխալ ուղու վրա կանգնել: Այսինքն՝ մեր ժողովրդի տասը տոկոսի մոտ առկա է հոգեւոր թերություն: Մենք պետք է ուշիմ, իմաստուն եւ խելացի լինենք նման երեւույթներից խուսափելու համար: Իսկ եկեղեցիները պետք է ակտիվացնեն իրենց գործունեությունը եւ աշխատեն ու աղոթեն:

«ԱՊԱՌԱԺ»

Սեփական տաճարիդ գեթ մեկ քար ավելացրու. Գագիկ Գինոսյան

ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության հրավերով վերջերս Ստեփանակերտ էր այցելել Արցախյան ազատամարտի մասնակից, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, «Կարին» ազգագրական երգիպարի համույթի հիմնադիր եւ ղեկավար, արձակագիր Գագիկ Գինոսյանը:

«Ապառաժ»-ի թղթակիցը զրուցել է Գագիկ Գինոսյանի հետ:

- 2005թ. սկսած՝ «Կարին» համույթն իրականացնում է «Մեր պարերը եւ մենք» պարուսուցման ծրագիրը: Ինչքանո՞վ է այս ծրագիրն ընկալում երիտասարդությունը եւ ինչքանո՞վ է մասնակցություն ցուցաբերում ծրագրին:

- Ծրագրի իրականացման առաջին ժամանակաշրջանում, կարելի է ասել, պարուսույցների քանակն ավելի շատ էր, քան սովորողներինը: Բայց հիմա, երբ ամառվա ընթացքում պարուսուցման ծրագիրն իրականացնում ենք «Կասկադում», պարի շուրջ են համախմբվում 1000-1500 մարդ: Երեւանի քաղաքապետարանի աջակցությամբ «Ազատության» հրապարակում իրականացրած մի քանի միջոցառումների մասնակցել են շուրջ 3 հազար մարդ, գլխավորապես՝ երիտասարդներ: Այսօր Հայաստանում ազգային պարին տիրապետում է մի ահռելի զանգված, ինչը ողջունելի եւ կարեւոր փաստ է: Այդ շարժումն ընդհանրացվում է, եւ այսօր միայն «Կարին» ազգագրական խումբը չէ, որ նման միջոցառումներ է նախաձեռնում: Պարուսուցման դասընթացներ են նախաձեռնում նաեւ «Կարին»-ից ծնված շարժումները՝ «Պարենք հայերեն», «Շավիղ» եւ այլ խմբեր: Այս ծրագիրը դարձել է հայ իրականության անբաժանելի մասը:

- Պարոն Գինոսյան, մասնագիտությամբ կիբեռնետիկ եք, ստացել եք գնդի եւ բրիգադի հրամանատարի որակավորում: Ինչպե՞ս որոշեցիք զբաղվել հայկական մշակույթով եւ մշակույթի ուսումնասիրությամբ:

- Ճակատագրի բերումով՝ 1987թ. հայտնվել եմ Հայրիկ Մուրադյանի «Վան» ազգագրական խմբում եւ սկսել ուսումնասիրել ազգային երգն ու պարը, ինչը եւ հետագայում դարձել է իմ կյանքի անբաժանելի մասնիկը: Այդ տարիներին ձեռք բերած պարային հմտությունները, պարի գիտական մոտեցման ուսումնասիրությունները բերել են այն զգացողությանն ու գիտակցությանը, որ ազգային երգ ու պարում թաքնված է մարդու ինքնության հիմնասյունը: Հետագայում անդամակցել եմ նաեւ Հայրիկ Մուրադյանի դստեր՝ Մարո Մուրադյանի «Ակունք» ազգագրական համույթին: Բավականին փորձառություն ձեռք բերելով՝ սկսել եմ ուսումնասիրել հայկական որոշ տարածաշրջանների պարերը, եւ քանի որ Կարին տարածաշրջանի մշակույթը լիարժեք ներկայացնող խումբ չկար, որոշել եմ հիմնել «Կարին» ազգագրական խումբը, որը հաջորդ տարի՝ 2016-ին, նշելու է հիմնադրման 15 ամյակը:

Այսօր «Կարին» խմբի պարացանկի եւ երգացանկի աշխարհագրությունը վաղուց ընդլայնվել եւ դուրս է եկել Կարինի տարածաշրջանի սահմաններից՝ ընդգրկելով գրեթե ողջ հայկական լեռնաշխարհը:

Պարերը գրառել ենք ոչ միայն Հայաստանի տարբեր մարզերից, այլեւ Արցախից, Ջավախքից, ԱՄՆ-ի, Լիբանանի, Իրանի հայկական գաղութներից, անգամ՝ Թուրքիայի մուսուլմանացած հայերից: «Կարին» խմբի պարացանկն այսօր բավական մեծ է:

- Դուք զբաղվում եք բանահավաքչական գործունեությամբ: Քանի՞ պար եք փրկել մոռացությունից եւ ի՞նչ դժվարությունների եք հանդիպել այդ ճանապարհին:

- Դժվարությունները, ճիշտն ասած, շատ են: Կան մարդիկ, ովքեր սեփականատիրական վերաբերմունք ունեն իրենց պարերի նկատմամբ, եւ ենթադրում են, որ դու իրենց պարերի միջոցով սեփական կենսագրությունդ ես կերտում: Այնինչ, եթե նույն պարի հինգ տարբերակը գիտես՝ հետաքրքիր է մեկ այլ տարբերակ եւս ուսումնասիրել:

Շատ դեպքերում՝ գրառված պարերի 30 տոկոսն անգամ չի բարձրանում բեմ: Այն ավելի շատ որպես գիտական նյութ է հանդիսանում եւ ոչ թե որպես զուտ բեմական մշակույթ: Ցավալին այն է, որ շատ դեպքերում պարը կրողները մահանում են՝ իրենց հետ գերեզման տանելով պարերը:

Հազվադեպ հիշատակումներից եւ գրքերից հնարավոր է լինում խճանկար հավաքելու գործողությամբ ստանալ պարի ընդհանուր պատկերը եւ ծագումնաբանության ծիսական պատկանելությունը: 60-80 տոկոսը հնարավոր է լինում հավաքել, հետո մտավոր պատկերացումով կռահում ենք, թե ինչ պատկեր է այնտեղ:

- Համաշխարհայնացման հիմնական դրսեւորումներից մեկը մշակույթն է: Այսօր Հայաստանում մշակույթն օգտագործվո՞ւմ է որպես երկրի հզորացման ճանապարհ:

- Կարծում եմ՝ Հայաստանում հիմա մշակույթն ընդհանրապես ոչ մի առումով չի օգտագործվում: Մշակույթն ուղղակի ապացույց է, որ սա էլ ունենք, բայց այն նպատակային եւ գաղափարական օգտագործում չունի: Մշակույթը չի ընկալվում անգամ որպես դաստիարակության հիմք, այնպես որ, առավել եւս՝ չի կարող օգտագործվել որպես երկրի հզորացման ճանապարհ:

Ինչ վերաբերում է համաշխարհայնացմանը, իմ կարծիքով՝ ամեն ազգ իր ինքնատիպությունն ունի, եւ համաշխարհայնացումը, մի բանով էլ վնասում է մեր ազգին: Մենք պետք է հզոր մշակույթ կերտելով՝ պաշտպանվենք այդ երեւույթից:

- Արցախյան ազատամարտի ազատամարտիկներից եք: Ի՞նչ եք կարծում՝ ի՞նչի համար էինք պայքարում եւ հասե՞լ ենք արդյոք այդ պայքարի արդյունքին:

- Իմ կարծիքով՝ պայքարը հավերժական է եւ չի կարող ավարտվել: Սահմանին տիրող իրավիճակն ապացուցում է, որ հակառակորդը չի հաշտվում մեր պապենական հողի ազատագրման փաստի հետ եւ թույլ չի տալու մեզ հանգիստ ապրել: Այսօր տարբերությունն այն է, որ պայքարը խրամատից տեղափոխվել է նաեւ դիվանագիտական, տնտեսական եւ քարոզչական դաշտ: Բայց, իհարկե, մենք՝ որպես պատերազմում հաղթող երկիր, պետք է շատ ավելի լավ տնտեսական, քաղաքական ու շահեկան վիճակում լինենք, քան թե կանք այսօր: Գարեգին Նժդեհն ասել է. «Անվերջ եւ անդադար քարոզչական աշխատանք է կյանքը»: Մենք անընդհատ պետք է զարգանանք ու վերակառուցվենք:

Պատերազմն իր հետ, ուզենք թե չուզենք, հասարակությանը բերում է պղտորման: Ժամանակ եւ կամք է պետք, որպեսզի հասարակությունը նման արհավիրքներից հետո ինքնամաքրվի: Ինքդ քեզ հետ պետք է պայքարես եւ ինքնամաքրման եզր գտնես: Ինչքան էլ ասենք, որ մենք հաղթանակած երկիր ենք, միեւնույն է՝ հաղթանակած երկրի համար անգամ պատերազմն արհավիրք է, որն իր հետ տանում է հազարավոր լավագույն տղաների, լավագույն սերնդի: Շատ կարեւոր է նախ եւ առաջ սեփական տկարությունների դեմ պայքարելը, ինչը կյանքի ամենադժվար պայքարն է: Եթե մենք կարողանանք մեր թերացումները շտկել, ոչ մի թշնամի չի կարող մեզ հաղթել: Հաղթանակը սեփական տեսակը հաղթահարելու եւ կատարելության հասնելու ճանապարհն է: Այս տեսանկյունից՝ անելիքները դեռ շատ են:

Այնպես չէ, որ մեր երկիրը ծայրահեղ վատ վիճակում է, բայց մենք այն ժամանակ կռվում էինք այն գիտակցումով, որ հրաշալի, հզոր եւ լուսավոր երկիր ենք ունենալու: Այսօր խնդիրներ կան հատկապես քաղաքական ու տնտեսական բնագավառում: Այդ խնդիրների հիմքում ընկած են եւ՛ գաղափարական, եւ՛ դաստիարակչական բացթողումներ: Քաղաքական դաշտում, եթե մարդը գիտակցում է իր՝ հայրենիքի մի մասնիկ լինելը եւ իր պարտականությունները հայրենիքի նկատմամբ, ապա դժվար թե սեփական շահերը գերադասի ազգային եւ պետական շահերից: Մեր երկրում անհրաժեշտ են դաստիարակչական եւ կրթադաստիարակչական դաշտի բարեփոխումներ:

- Ըստ Ձեզ՝ այսօրվա սերունդը, որքանո՞վ է կրում այն ոգին, որն ունեիք դուք ու Ձեր սերնդակիցները:

- Մենք կարծում ենք, որ նոր սերունդը չի կարող մեզ գերազանցել եւ չի կրում այն պարտականությունը հայրենիքի նկատմամբ, որն ունեինք մենք, բայց այսօրվա իրավիճակում երիտասարդներն ապացուցում են, որ եթե նույնիսկ որոշ տեղերում նրանք չեն գերազանցում մեզ, ապա շատ-շատ հարցերում մեզ գերազանցող սերունդ են: Այսօրվա հասարակությունը կարծես թե բեւեռացած է: Խորհրդային ժամանակաշրջանում գրեթե չկային բեւեռացած մարդիկ՝ ոչ շատ վատ, ոչ շատ լավ: Հիմնականում միջին տեսակի մարդիկ էին: Հասարակությունը եւ պետությունը թույլ չէր տալիս, որպեսզի ինչ-որ մեկը /նույնիսկ լավ իմաստով/ առանձնանա, որովհետեւ տարբերվող մարդը կարող էր անկառավարելի դառնալ պետության կողմից:

Ռաֆֆին ասում էր. «Հայրենասիրությունը սկսում է հայրենաճանաչությունից»: Մենք ունենք երիտասարդության մի շերտ, որն ավելի քան հայրենաճանաչ է, գիտի պատմությունը, պատմության այն դրվագները, որի օրինակով պետք է սերունդ դաստիարակվի: Կարծում եմ՝ մենք ֆենոմենի առաջ ենք կանգնած, մենք առանձնապես շատ ջանք չթափեցինք, հատկապես՝ պետությունը եւ իշխանությունները, որպեզի կառուցենք ու դաստիարակենք այս սերունդը:

Երկիրը քանդող վատ երեւույթներից է նաեւ արտագաղթը: Ինձ համար ցավալի է, որ տաղանդավոր մարդիկ ապաստան են գտնում օտար երկրներում: Այս երեւույթի վերաբերյալ ունեմ բազմաթիվ աֆորիզմներ, դրանցից մեկը միշտ նշում եմ: Օտարի համար հանճարեղ տաճար կառուցելու փոխարեն՝ սեփական տաճարիդ գեթ մեկ քար ավելացրու, թեկուզ ստիպված լինես այդ քարն ամրացնող շաղախի մեջ քո հանճարն անգամ թաղել...»: Եթե մենք հետեւենք այս աֆորիզմին, ի վերջո մենք էլ մեր տաճարը կկառուցենք:

Հովհաննես Ադամյանը ստեղծել է առաջին գունավոր հեռուստացույցի նախատիպը եւ վաճառել Գերմանիային, փոխանակ ներդներ Հայաստանում: Այսօր Հայաստանում նույնիսկ վերանորոգման լուրջ արհեստանոց չկա, ուր մնաց հեռուստացույցի արտադրամաս: Իսկ իրականում մենք կարող էինք նույնիսկ թելադրող լինել հեռուստատեսության արտադրության ոլորտում:

Այսպիսի օրինակներ շատ կան: Մենք լքում ենք Հայաստանը, վաճառում ենք մեր միտքը ուրիշին: Մենք պետք է հասկանանք, որ նման ներդրումները վնասում են մեր անձը, մեր սեփական շահը, իսկ սեփական շահը՝ հենց մեր հայրենիքի շահն է:

Հարցազրույցը՝՝
Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆԻ

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանց 17,
հեռ.97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻՉԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 1000: Գինը՝ 100 դրամ:

Խմբագրական խորհուրդ